№ 21 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 29

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 29 № 21

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի: Յունվարի 1-ից մինչև 1 յունիսի 4 րուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Տիրուհի Մէլիք-Աղամալեան խորին վշտով յայտնում է ազգականներին և ծանօթներին, որ յունվարի 27-ին Ալեքսանդրապօլում վախճանվեց

ԱՂԱՄԱԼ-ԱՂԱ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆՑ

Թաղումը տեղի կունենայ Ալէքսանդրապօլում այսօր, կիրակի, յունվարի 29-ին:

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԿԱՐԳԵՐ

ԲԱԶԱԶԽԱՆԻ ՄՕՏ

(Манташевскіе ряды)

ԵՐԿԱԹԱՎԱՃԱՌԻ ԽԱՆՈՒԹ

Դաւիթ Եսայեան Առաքելեանցի

Յայտարարում եմ ի գիտութիւն յարգելի ժողովրդին և իմ պ. պ. կլիենտներին՝ թէ Թիֆլիսի և թէ օտար քաղաքների, որ իմ խանութները, որոնք կային թէ Թուրքերի Մայդանում և թէ Սալդատսկի բազարում, ես անցեալ տարվայ նոյեմբերի 22-ից փոխադրել եմ մի նոր տեղ, մի ընդարձակ խանութ Բազազխանի մօտ, Մանթաշեանցի նոր շէնութեան մէջ, և դրա համար էլ յայտարարում եմ, որ այն բաց հաշիւները, որոնք վերաբերում են իմ վերոյիշեալ դադարեցրած խանութներին, պէտք է մաքրվեն իմ նոր խանութում: Յուսով եմ, որ բոլոր իմ կլիենտները չեն թողնի իմ նոր խանութը առանց ուշադրութեան:

4—10 (Ն. Կ.) Յարգանօք՝ Դ. Ե. Առաքելեանց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Որոշ դաւանանք. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Մեր ցաւը ծով է. Բագուի մահմեդականների կեանքից. Տեղեկութիւններ գաւառից. Մի քանի ազդեր. Մենք անտարբեր ենք. Նամակ Բագուից. Նամակ Նուխուց. Նամակ Ղուբայի գաւառից. Բաց նամակ Գր. քահ. Երզնկեանցին Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անձնական ազատութեան գրաւականները Անգլիայում:

ՈՐՈՇ ԴԱՒԱՆԱՆՔ

Ի՞նչ է ձեր քաղաքական և հասարակական դաւանանքը:

Ահա հարց, որ դրված է մեր գործողների առաջ և պահանջում է նրանցից պատասխան:

Այդ հարցին մի քանիսը շատ կտրական պատասխան են տալիս, որոշ կերպով, դասելով իրանց, օրինակ, սահմանադրական-ռամկավարական, սօցիալ-դեմօկրատական, սօցիալիստ-յեղափոխական և ուրիշ կազմակերպութիւնների մէջ:

Իսկ շատ են այնպիսիներ, որոնց համար դաւանանքի մասին հարցադրումը մի սրտի թոյն է, մի տանջանք է նրանց երերուն և տարուբերվող բնաւորութիւնների համար:

Դաւանանք:

Որ պէտք է և պարտաւորական է ունենալ դաւանանք, դա անհերքելի է:

Բայց հաստատ համոզմունքներ ունենալ, մի ամբողջացրած դաւանանք կազմել, մի որոշ աշխարհայեացք մշակել—դա շատ էլ հեշտ բան չէ:

Դաւանանքը մարդու սրբութիւնն է, նրա բարոյական եսը, նրա հոգեկան անհատականութեան արտայայտութիւնը:

Սակայն ի՞նչ անէ նա, ով չէ մշակել իր համար որոշ աշխարհայեացք, ով չէ կարող առաջ բերել իր դաւանանքը:

Նրան մնում է անել այն, ինչ որ մենք տեսնում ենք յաճախ: Արտասանել անորոշ բառեր, անել անվերջ բացականչութիւններ, հաւէս բերել գեղեցիկ բանախօսեր, թեթեւսոլիկ կերպով ծաղրել ուրիշներին և վերջ ի վերջոյ ոչինչ չասել պարզ, որոշ, դրական և էական:

Եւ զարմանալի էլ չէ, երբ յանկարծ այդպիսիների մէկից դուք յանկարծ լսում էք մի այսպիսի նախադասութիւն՝

—Հարկաւոր էլ չէ որոշ դաւանանք ունենալ: Ինչ որ վերահաս ալիքը թելադրում է, այն էլ պէտք է լինի գերիշխող ղեկավարը քաղաքական և հասարակական գործառնութիւնների մէջ.

Այնուհետեւ այդպիսի անհատներին մնում է ընդհանուր բառերով և հասկացողութիւններով վարագուրել այն պակասը, որ առաջանում է դաւանանքի բացակայութիւնից: Մնում է քարոզներ խօսել մի օր առաքինութեան, միւս օր ողորմածասիրութեան, երրորդ օր ազատութեան, ընկերսիրութեան, արդարութեան, կրթութեան, լուսաւորութեան մասին և այլն և այլն:

Այդ քարոզները լաւ են, բայց նրանք պէտք է կապվեն մի որոշ աշխարհայեացքի հետ, պէտք է մտնեն մի որոշ սիստեմի մէջ:

Ընդհանուր բարոյական քարոզները լսվում են Ատլանդեան Ովկիանոսից սկսած մինչև Մեծ Ովկիանոսի ափերը, բայց հասարակական կազմը և հասարակական հոսանքների բնաւորութիւնները շատ տարբեր են այդ ընդարձակ տարածութեան վրա:

Եւ անկասկած բարոյական հասկացողութիւնը այն ժամանակն է բեղմնաւոր դառնում, երբ նա կապված է ժողովրդի տնտեսագործական այնպիսի շարժման հետ, որ ունի որոշ գաղափարական ամբողջութիւն:

Մենք զարմացել ենք և զարմանում ենք այն խուսափումների վրա, որ է տալիս մեր ինտելիգենտների մի մասը իր համոզմունքների և դաւանանքների վերաբերութեամբ:

Նրանցից իւրաքանչիւրը աշխատում է ցոյց տալ իրան, իբրև մի անձն, որի համար շատ նեղ է ոչ միայն մեր կեանքը, այլ և Եւրոպայի և Ամերիկայի կեանքը, որի համար խղճալի են ներկայ մարդկութեան լաւագոյն գործողները: Բայց ինքը չէ կարող յայտնել թէ ինչ է նա մտադիր և ինչ է նա կարող իրագործել մեր ներկայ և մերձաւոր իրականութեան համար:

Մենք յարգում ենք ամեն մի ոգեւորութիւն և փիլիսոփայական թռիչք. բայց դրանք ոչ միայն արգելք չեն, այլ և կարեւոր գործօններ են անհատի համար որոշելու իր վերաբերմունքը դէպի կեանքի խնդիրները և պարզելու իր դերը դէպի կեանքի երեւոյթները:

Իսկ ոգեւորութեան հմայքով և փիլիսոփայական վերամբարձումներով պաշտել ներկայի անգիտութիւնը—դա չէ կարող երկար ժամանակ մարդկանց մոլորութեան մէջ պահել:

Հասարակութիւնը իր մտաւոր և հասարակական գործողներից իրաւունք ունի պահանջելու համոզված խօսքեր, մըտածված առաջարկներ, մշակված ծրագիրներ և գիտակցական վերաբերմունք դէպի հասարակական կարիքները և նրանց գարմանելու միջոցները:

Ով կամենում է, որ նրան լսեն և լաւ ծիչ բան հասկանան և ուղեցոյց վերցնեն կեանքի համար, նա պէտք է լուրջ կերպով էլ վերաբերված լինի հասարակական հարցերին և խօսի հասարակութեան հետ համոզմունքով ու որոշ դաւանանքի տրամադրութեամբ:

Միւս անգամ մենք աւելի կը պարզենք մեր առեղծը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ղազախ, 27 յունվարի:

Այստեղ ստացված է Շամշադինի գաւառամասից հետեւեալ տեղեկութիւնը: Տափարակի թուրքերը գանգատվել են գեներալ-նահանգապետ Ալֆատանին, որ նրանց կեանքը վտանգի մէջ է հայերից և որ զօրքը պէտք է օգնի թուրքերին: Թօւզի շրջանում զօրք քիչ է: Գեներալ նահանգապետը կարգադրել է, որ այնտեղ ուղարկվի զինուորների մի վաշտ:

Ղազախ, 27 յունվարի:

Երէկ մենք հաղորդել էինք, որ Օքսիւզլու թուրք գիւղի մօտ ընդհարում է սպասվում: Օքսիւզլուն շրջապատված է հայերով: Թուրքերը դիմել են վարչութեան և խնդրում են օգնութիւն: Զօրքը դեռ տեղ չէ հասել:

Նոր-Բայազէդ, 27 յունվարի:

Հայ գիւղերի շրջանում երեւացել են թուրք աւազակներ: Նրանք յարձակումներ են գործում: Հայերը դիմադրում են: Երկիւղ կայ, որ տեղի ունենան խիստ ընդհարումներ:

Բագու, 27 յունվարի:

Զարամիտները լուրեր են տարածում, որ իբր թէ հայերը մտադիր են առաջիկայ փետրվարի սկզբին, կոտորածների տարեդարձի օրերում, ընդհանուր յարձակում գործել թուրքերի վրա: Չը նայելով այն հանգամանքին, որ դա կատարեալ կեղծիք է և անհեթեթութիւն, կան հաւատացողներ: Հայերի և թուրքերի խելամիտ ներկայացուցիչները աշխատում են հասկացնել ժողովրդին, որ այդ լուրերը միայն սուտ նպատակներ առաջ մղող մարդկանց գործն է:

Երեւան, 27 յունվարի:

Զանգեզուրի գաւառում ընդհարումները չեն դադարել: Զօրքի ոյժը աւելացնելու նպատակով Ալէքսանդրապօլից ուղարկվում են մի քանի թնդանօթներ:

Գանձակի ժամանակաւոր գեներալ նահանգապետից՝ յունվարի 23-ին.

«Երէկ Ղազախի գաւառի Ուզունթալայի մասին հայերը այրեցին Ջաֆարալի գիւղի մի մասը և տարան քանակաշխի տաւար: Ապա թուրքերը այրեցին Ուզունթալայա կայարանի խանութները, Լալաքենդ գիւղի մի մասը և ջրաղացը, քշեցին նախիրը: Ուղարկված կօզակների հարիւրեակը մի քանի անգամ խմբական կրակ պարպեց հայերի վրա: Այս րօպէիս հակառակորդ կողմերը Ուզունթալայի դիրքերում են գտնվում, սպասվում են ընդհարումներ:

Ղազախի գաւառից. Բաղանիս, յունվարի 16-ին:

Գայլերի նման թուրքերը յարձակվում են Ղազախի գաւառի զանազան գիւղերի վրա. չը նայելով իրանց բազմութեանը—ջարդվում են, որից չեն խրատվում. մէկ գիւղի մօտ ջարդվելուց յետոյ յարձակվում են միւսի վրա: Թուրքերը ճարպիկութիւն, քաջութիւն չունեն, սրանք իրանց բազմութեամբ են ուզում հայերի վրա սարսափ ազդել և սրա համար էլ յարձակվելու համար ամենաթոյլ գիւղերն են ընտրում: Թոյլ գիւղերից մէկն է համարվում և Կոտէնը, որին շրջապատեցին թուրքերը այսօր և որքան աշխատեցին աննկատելի կերպով գիւղը մտնել՝ չը աջողվեց. հայ պահապանները կրակ բաց արին, շուտով վրա հասան Ջողազի և Սևքարի խմբերը. թուրքերը սկսեցին խայտառակ կերպով փախչել, հետները տանելով սպանվածներին: Կռիւը տևեց մինչև մութը. հայերից միայն մէկ մարդ է թեթև վիրաւորվել: Հայերի մէջ իրանց քաջութեամբ աչքի էին ընկնում բաղանիսցի Ալէքսանը, Ջողազեցի Գիգօլը, Աւետիքը, բայց գովելի էր Մելիք գիւղացի Աթաբէգի գնդակահարութիւնը. 4 վերստի հեռաւորութիւնից թուրքերին գլորում էր: Այս կռիւը մեծ նշանակութիւն—ազդեցութիւն ունեցաւ շրջակայ հայ և թուրք գիւղերի վրա: Յարձակվող թուրքերը հետեւեալ գիւղերից են՝ Ղըզըլ-Հաջիլու, Աբբաս-Բէգլու, Ալփաուտ, Մազամլու, Ղուշչի-Այրում, Աքսիբարա, Այրում, կային և ուրիշ գիւղերից:

Յունվարի 21-ին

Այսօր Աբբաս-Բէգլուի թուրքերը յարձակվեցին Կոթի գիւղի վրա, բայց տեսնելով, որ գիւղից օգուտ չը կայ, տաւարն են քշել և վրա են հասել զինուորները և յետ խլել:

Յունվարի 22-ին

Սուրհանդակը լուր բերեց, որ թուրքերը մեծ ոյժերով արշաւելով Լալի-քենդի վրա, մտնում են հայերի դիրքերը, բայց շուտով անվեհեր հայ զինուորները դուրս են քշում թուրքերին և սկսում են հալածել. կրակի են մատնում երկու թուրքական գիւղեր: Կռւողները ասում են, որ զէնք է հարկաւոր:

Ֆիշերվայ ժամը 9-ին շրջապատեցին Ջողազ և Սևք գիւղերը. առաջինն եա դատարկված է. սաստիկ հրացանաձգութիւնից յետոյ թուրքերը յետ նահանջեցին, բայց Ջողազը կրակեցին, որն ամբողջ գիշերը այրվում էր:

Յունվարի 24-ին

Առաւօտեան ժամը 10-ին շրջապատեցին թուրքերը մեծ ոյժերով մեր գիւղը: Թուրքերին յետ մղեցինք: Մեզանից մի զոհ եղաւ: Մեր քաջերը հալածեցին թուրքերին, շրջապատեցին Այրում գիւղը և կրակի մատնեցին: Մեզանից զոհ չեղաւ:

Յունվարի 25-ին

Այսօր էլ շրջապատեցին Ոսկեպար հայ գիւղը. կռիւը տևեց ամբողջ օրը. օդը փչացել էր վառօդի հոտից. մեծ էր թուրքերի ոյժը, բայց հայ կտրիճները պաշտպանվում էին հերոսաբար: Թուրքերի շըղթաները պատռեցին, սկսեցին հալածել և իրանք շրջապատեցին թուրք Աքսիբարա գիւղը. երկուսը հայերից սպանվեցին, երեքն էլ անյայտ կորան. անյայտ կորածները (կենդանի բռնել են) 14-րդ գրուզինսկի գնդի զինուոր Պապի Յարութիւնեանը, որը արձակուրդով իր հայրենիքն էր վերադառնում (Ղրղի, Շամշադինի կողմից). հերոսաբար մեռան իրանց հայրենիքի, ազգի, կանանց, պատուի պաշտպանութեան համար բարանեցի Գրիգոր Քոսեանցը, բաղանիսեցի Հասան Ալիխանեանցը, ղօշղօթանցի Յարութիւն Խէչիկեանցը, Մովսէս Սարիբէգեանցը:

Թուրքերը յարձակվել են Մազրէքի վրա և քշել են Ոսկեպարից մեծ քանակութեամբ տաւար, ոչխար և ձիաներ: Դիմեցէք փոխարքային, որ մեզ կամ աջակցեն այս դազաններից կամ իրանք վերջացնեն: Ի՞նչ է մեր դրութիւնը. մի՞թէ արդարութիւնը բոլորովին վերացել է, մի՞թէ իշխանութեան սիրտը քարացել է, որ այսքան անմեղ արիւն թափելուն վերջ չէ տալիս: Նորից թուրքերը Կուր գետի ափերից մեծ ոյժեր են ստանում. մեր դրութիւնը կրիտիկական է:

Մեծ քաջութիւն ցոյց տուեցին այս կռիւների մէջ հերոս խմբապետ Շէալին, Համօն և Արշակը. օրհնեի նրանց ծնունդը:

Մելքիսեդեկ քահանայ

«Մշակի» երէկվայ համարում մենք տպագրեցինք Շուշուց ստացած մի հեռագիր խուզարկութիւնների և կալանաւորութիւնների մասին: Մենք բաց թողինք անունները կասկածելով, որ դուցէ դա անյարմար է նրանց համար: Սակայն նրանք արդէն հրապարակ են հանվել: Ուստի լրացնում ենք հեռագիրը. խուզարկութիւն եղել է ուսանող Դոլուխանեանի, ատամնաբոյժ Մաշուրեանի և Ռուբէն Իւզբաշեանի մօտ. կալանաւորված են բժիշկ Բահաթրեան և Գերասիմ Մելիք-Շահնազարեան:

Բագու, 27 յունվարի:

Յունվարի 27-ի երեկոյեան մօտ ժամի 5-ին, այստեղ կողոպտեցին արտասահմանեան հիւպատոսներից մէկին: Դէպքը չունի առանձին բացառիկ բնաւորութիւն:

Գանձակի հայ կանայք հրատարակել են հետեւեալ կոչը:

Գանձակի հայ կանայք և օրիորդները դիմում են բոլոր հայաբնակ քաղաքների իրանց քոյրերին և խնդրում յիշել պատմական այս դառն օրերը, որոնք ծանրանում են այժմս ամբողջ հայութեան վրա: Աշխարհաւեր հրդեհը, որ այժմ բռնկվել է ամբողջ Անդրկովկասում, սպառնում է լափել, ոչնչացնել մեր շէն քաղաքները և անմնամ գիւղերը: Հայ ժողովուրդը—մեր կուռք տարրը, որ սիրում է իր երկիրը, իր մայրենի հողը իր հարազատ զաւակի պէս, այսօր այդ երկրի փրկութեան համար օրհասական կռիւ է մղում, կռիւ մի աւերիչ ուժի դէմ, մի անկուլտուրական ժողովրդի դէմ:

Քոյրեր, այսպիսի օրերում լռելը, լալկան ականատեսների դերում լինելը—մի՞թէ աններելի յանցանք չէ, մի՞թէ իւրաքանչիւրը մեզանից չէ կարող իր ուժերի չափ օգնել մեր անձնուէր կռիւներին, մեր հերոս ժողովուրդին: Նրանք, որ հայութեան պատիւը բարձր պահելու համար զոհում են իրանց կեանքը, մի՞թէ մեկուսացած պիտի զգան իրենց կռւի դաշտում: Թող զոհ բերէ մեզանից իւրաքանչիւրը ինչ որ կարող է. թողնենք զարդ ու պաճուճանք, միանանք ու միահամուռ գործունէութեամբ ցոյց տանք ամբողջ աշխարհին, որ հայ ազգն էլ ապրելու իրաւունք ունի և մարդկութեան պատմութեան մէջ իր դերն ունի կատարելու:

Հայութեանը վտանգ է սպառնում:

Հերիք է որքան լռեցինք:

Այժմս դէպի գործ:

Յունվարի 20-ին:

Թիֆլիսում լուր է ստացվել, որ Բօրչալուի գաւառի Համամլօ թուրք գիւղի զինված ամբոխը յարձակվելով Դասսյևի պանր-գործարանի վրա՝ թալանել է ու աւերել: Նոյն բաղդին է արժանացել շվէյցարացի Բենեդիկտ Բօեռի կալուածքը նոյնպէս: «Т. Л.»

Թիֆլիսում տեղեկութիւններ են ստացվել, որ Խրամի, Դագեթ-Խաչէնի, Ցօնէթ-Գօլօվանի, Պրիւտսկի և Բէլօկլիւչի արքունական անտառները մատնված են անխնայ կոտորման՝ Գուրնիա-Կալա, Բարմաքսիզ, Պրիուտ, Բէլիյ-Կլիւչ, Մեծ և Փոքր Գոմարէթի, Մեծ Ցօնէթի, Բէշտաշէնի, Աղալիբի և Դագեթ-Խաչէնի գիւղերի բնակիչների կողմից: Անտառի կտրումները ագրարական շարժման հետեւանքներ են: Բօրչալուի գաւառումն էլ են սկսել անտառները անխնայ կտրել՝ ոչնչացնել:

Նոր-Բայազէտից հեռագրով յայտնում են գործակալութեան տուած տեղեկութեան մասին աւելի ճիշտ տեղեկութիւններ. «Ղըզըլբուլաղ գիւղացի մի քանի զինված թուրքեր գնում են Թուսկիւլու հայ գիւղը գողութիւն անելու: Հայերը նկատելով մօտեցող թուրքերին, նրանց վրա մի քանի անգամ հրացան են արձակում, որից շփոթութիւն և իրարանցում է առաջանում ամբողջ շրջակայ գիւղօրայքում: Գործը քննելու համար, գաւառապետի բացակայ լինելու պատճառով, գընաց նրա օգնականը: «Т. Л.»

Երեւանի խաղաղարար մասնաժողովի անդամներ՝ Մելիք Աղամալեան, Արախան Էրիվանսկին, Մուշեղեանը, Տէր-Խաչատրեանը, Ալիեվ, Իսմայիլօվ, Եղիազարօվ, Տէր-Ավետիքօվ և Գավրիլօվ, հեռագրով խնդրում են զեկուցանել Կովկասեան Փոխարքային Երեւանեան նահանգի թուրքերի ու հայերի միահամուռ ցանկութեան մասին՝ շտապեցնելու երկու ազգութեան ներկայացուցիչներից Թիֆլիսում կայանալիք համագումարը, որից և սպասվում է երկրի խաղաղացնելը:

«Մշակի» նախորդ համարներից մէկում մենք հաղորդեցինք, որ Թիֆլիսաբնակ բոլոր ղազախեցիները որոշել են ամսական որոշ տուրք տալ իրանց գաւառի կարիքների համար: Այժմ պ. Լևոն Ղուլեան «Тифл. Лист.» լրագրի միջոցով նոյնպիսի առաջարկութեամբ դիմում է Թիֆլիսում բնակվող շուշեցիներին, և խնդրում, որ շուշեցիներն էլ ամսական որոշ տուրք սահմանեն և հաւաքած գումարով օգնեն իրանց հայրենի քաղաքին և գաւառին: Թիֆլիսում ապրում են մօտ 250 ընտանիքներ, եկած Ղարաբաղից: Դրանց պարտքն է այժմ իրանց ծննդավայրին օգնութեան ձեռք կարկառել:

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Քութայիս, 27 յունվարի:

Ժողովրդի մէջ տիրում է սարսափ: Շատերը հեռանում են քաղաքից դէպի Բաչա և լեռնային հեռաւոր մասերը: Քաղաքում աւերվեցին խանութներ, և այրվեցին տասնից աւելի:

«Կավկազ» թերթը հաղորդում է, որ Կովկասեան Փոխարքան ստացել է հետեւեալ հեռագիրները.

Քութայիսի արքունական պալատի կառավարչից՝ յունվարի 23-ին.

«Օնիի գանձապահը հաղորդում է, որ դեկտեմբերի 31-ին գանձարանը գրաւեցին յեղափոխականները, հեռացրին բոլոր ծառայողներին և յափշտակեցին բոլոր դրամները, արժէքաւոր և ուրիշ գոյքերը: Յունվարի 16-ին գանձապահին վերադարձրին գանձատան բանալիները: Ստուգելու ժամանակ պակասում էին 587 րուբլի դրամներ, պակասել են երկու սուր, վեց ատրճանակ, բոլոր փամփուշտները, Թագաւորի պատկերը, երկու պայուսակներ և ուրիշ իրեր. տոկոսաւոր թղթերը և մարկաները ամբողջապէս մնում էին: Ժամանակին ուղարկած իմ հաղորդագրութիւնը յեղափոխականները յափշտակել էին և հաղորդելու համար նա դատապարտված էր: Դատը սկսվեց մահվան սպառնալիքով, եթէ որ նորից հաղորդէ: Օնիի հետ հաղորդակցութիւն չը կայ»:

Քութայիս: Որպէս այսօրվայ հեռագրում յիշված է, յունվարի 26-ին մահացու կերպով վիրաւորվեց Զուգդիդի գաւառապետ Գեդամօվ: Այս լուրը Քութայիսից եկողները պատմեցին: Գեդամօվին վիրաւորեցին այն ժամանակ, երբ փողոցով անցնում էր: Սպանողը փախաւ, չը նայելով որ խիստ միջոցներ ձեռք առնվեցին նրան բռնելու: Նոյն օրը, յունվարի 26-ին, Գեդամօվին վիրաւորվելուց յետ, հրդեհ սկսվեց Գվէլեսիանիի տան մօտերքը: Այրվեց թատրօնը և ուրիշ շինութիւններ: Ասում են, մի քանի մարդիկ են սպանված և վիրաւորված:

(Յնօբիս Փուրցելի)

Փօթի: Փօթեցիները, ուրիշների հետ համեմատած, ուշ իմացան հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրատարակութիւնը: Հէնց որ մանիֆեստի բնագիրն ստացան, իսկոյն և եթ տպագրել տուին և որքան հնար էր, ժողովրդի մէջ տարածեցին: Մի և նոյն ժամանակ հէնց սկզբներում տեղի ունեցաւ ցոյց, որին բացի քաղաքացիներից, մասնակցեցին իգական և արական դպրոցների սաները: Բացի դրանից ցոյցին մասնակցեց և քաղաքային դպրոցի երաժշտական խումբը: Ուսուցչական սեմինարիան, որպէս փակ ուսումնարան, ամենևին չը մասնակցեց ցոյցերին, սակայն այդ օրը նրանց մօտ գնացին ցուցարարները և իրանց հետ տարան:

Մի փոքր ժամանակից յետոյ եկան մանիֆեստի զօրութեամբ ազատվածները, ադմինիստրատիւ կարգով Ռուսաստան աքսորված քաղաքական յանցաւորները, որոնց գործեցէք դիմաւորեցին երկաթուղու կայարանում և մեծ ոգեւորութեամբ տարան քաղաք:

Այդ ժամանակներում Փօթուց հեռացաւ յայտնի Ալիֆտանը, որը խիստ ռէժիմի և զինուորական դրութեան երկրպագու էր: Կեանքը կամաց կամաց իր սովորական շրջանակների մէջ էր մտնում, սակայն միտինգները այնու ամենայնիւ սարքվում էին բազմաթիւ ժողովրդի ներկայութեամբ: Այդ միտինգներին, որպէս յայտնի է, սկսվեցին հայ-թուրքական ընդհարումները Գանձակում և արևելեան այլ նահանգներում: Այդ հանգամանքը երկիւղ տարածեց գործեց հայերի մէջ: Սկսեցին զէնք գնել, մտածելով, որ թուրքերը Փօթի էլ կը հասնեն և հայերի վրա յարձակում կը գործեն: Քաղաքի հին ոստիկանութիւնը անհետ կորաւ:

Սկսվեց պօստ-հեռագրական գործադուլը: Մի փոքր ժամանակից յետոյ երկաթուղու երթեւեկութիւնը կանգ առաւ և դրա հետ միասին թանկացաւ շաքարը, ալիւրը և վառելիքը: Մարդ թանգութեանը կը դիմանար, սակայն մի փոքր յետոյ յայտնվեց, որ ուտելիք ոչ մի տեղ չի ճարվում: Այն ժամանակ յեղափոխութեան կազմակերպութիւնները գործի գլուխ անցան և շատ ժամանակ չանցած, որ Խաշուրից սահնակներով բերին Փօթու համար բաւարար ալիւր և շաքար, իսկ նաւթը բէզէ-բուսերից էին բերում և փութը հինգ կոպէկից թանգ չէր ծախվում:

Աշխարհից կտրված էինք, սակայն հատուկտոր տեղեկութիւններ հասնում էին մեզ: Քութայիսի մասին ասում էին, որ այնտեղ հանրապետութիւն է հաստատվել, նախագահ են ընտրել և ժամանակաւոր կառավարութիւնն է գործում այնտեղ և կարգ ու կանոն հաստատում: Այսպիսի տեղեկութիւններ են գալիս և Թիֆլիսից:

Այսպէս քաշ տուինք անցեալ տարին և կանգնեց դեկտեմբերի 31-ը: Քաղաքում, երբ դուրս եկանք, պատերին կպցրած տեսանք մի յայտարարութիւն, որով ծանուցանում էին թէ Փօթու և Գուրէթի գաւառներում զինուորական դրութիւն է յայտարարված և գեներալ-նահանգապետ է նշանակված տեղական զօրքի հրամանատար գեներալ Բաուէր:

Զինուորական դրութիւն հրատարակելու հետ միաժամանակ սկսվեցին ձերբակալութիւնները: Նախ և առաջ Փօթու քաղաքագլուխ Գրիգոլաշվիլին տարան հեռացրին այնտեղ, ուր զինուորական դրութիւն չէ հրատարակված: Բացի դրանից կալանաւորեցին՝ Գվարամաձէին, Շեխնովին, Թիֆիաշվիլին, Ջաղնուրիձէին, Ամիրաղօվին, Կեցխօվելին, Մուչաձէին, Տասիշվիլին և շատ ուրիշներին:

Քաղաքում ուժեղացրած պատրուլներ են շրջում, կայարանում մի վաշտ զինուոր է կանգնած: Կեանքը, մանաւանդ մութն ընկնելու ժամանակ, մեռած է, ամեն մարդ իր տանն է նստած և թէ մի բան հարկաւոր լինի, տանից չէ կարողանում դուրս գալ:

Յունվարի 6-ին Ջրօրհնէք և զօրքի զօրահանդէս չը կար: Գեներալ Բաուէրը կանչեց տեղական դպրոցների տեսուչներին և կտրական կերպով խնդրեց, որ ուսումը յունվարի 9-ին վերսկսեն դպրոցներում: Խնդիրքը, ի հարկէ, կատարեցին:

Բացառիկ դրութեան մէջ է ուսուցչական սեմինարիան, որի մահմեդական աշակերտները, հէնց որ թուրք հայկական արիւնեղութիւնը սկսվեց, իրանց տները քաշվեցին: Երկար ժամանակ է հարկաւոր նրանց ժողովելու համար և մինչև որ կը հաւաքվէին, 1—2 հոգի էին նստած դասարանում: Չը նայելով դրան ուսումը շարունակվում էր: Մինչև այժմ հարիւր աշակերտի փոխարէն 20 հոգի են սովորում:

Անցեալ ամառ Փօթում սպանվեց քաղաքային պրիստաւ Աւալաշվիլին: Այն ժամանակ չը գտան պրիստաւի սպանողներին: Այժմ գեներալ Բաուէր պահանջում է գտնել սպանողներին և մի և նոյն ժամանակ ասում է, որ հակառակ դէպքում ինքը ստիպված կը լինի աւերել այն թաղը, ուր տեղի է ունեցել պրիստաւի սպանութիւնը: Փօթեցիները տարակուսանքի մէջ են և չը գիտեն թէ ինչ անեն:

Յունվարի 24-ին Փօթի եկած նորակոչ զինուորները Փօթու մեռած և անշարժ բնակիչներին մի փոքր խօսեցրին: Որպէս յայտնի եղաւ, համարեա իւրաքանչիւր գիւղից եկել են նորակոչները:

Այս օրերս Փօթու գեներալ-նահանգապետը կանչել է Փօթու հոգևոր դպրոցի աշակերտներին և պատուիրել է, որ եթէ ձեզանից որ և է մէկը կը համարձակվի ընդհատել ուսումը, ձեր հայրերի հետ ցուրտ երկիրները կաքսորեմ: Գեներալ-նահանգապետը կարգադրել է, որ իւրաքանչիւր աշակերտ մինչև փետրվարի մէկը անպատճառ գայ դպրոց:

Սրանից առաջ Փօթում կալանաւորվեց և Փօթու բանտումն է նստած մինչև օրս Փիլիմօն Կարբելաշվիլի քահանան, որը երկարատեւ ժամանակ ուսուցիչ էր Փօթու դպրոցում: Այժմ դպրոցի վարչութիւնը հրաման է ստացել ուրիշ ուսուցիչ վարձել:

Գորում հաստատապէս իմացանք, որ Ցխինվալում պրիստաւ Մաղաշվիլի յունվարի 24-ին առաւօտեան հեռագրով խնդրել է, որ Գորուց Ցխինվալ ուղարկեն կօզակներ և թնդանօթներ: Յունվարի 24-ին Ցխինվալից Գորի ուղարկվեց մի հարիւրեակ կօզակներ և երկու թնդանօթ: Ասում են, որ այս օրերս կըրկին թնդանօթներ և զօրքեր կուղարկվեն Ցխինվալ: Հաւատացնում են, որ Ցխինվալի մի քանի բնակիչները խնդրել են իշխանութիւնից մշտապէս հարիւր զինուոր բնակեցնեն Ցխինվալում, խոստանալով ծախսը իրանք վճարել:

Ամբողջ Քարթլին զօրքով է լցված. քիչ շատ մեծ գիւղ չէք տեսնի, ուր զօրք բնակած չը լինի: Մի քանի գիւղերում զօրքը իր բանը գլխացրեց և այժմ գնում է ուրիշ տեղեր:

Քարթլիի և Լամիսղանիի համբաւը դուք լաւ գիտէք: Զօրքը դեռ այդ գիւղերից չէ հեռացել. հեծեալ կօզակներին ուղեկցում և արտիլէրիան իր թնդանօթներով: Գիւղը ամբողջապէս դատարկվեց, բոլորն էլ փախել են: Լամիսղանացի կալուածատէր իշխան Երիսթաւ Գորի էր և գեներալ-նահանգապետ Բաուէրին խնդրեց թէ բաւական է Լամիսղանիին տուած տանջանքը. ժողովուրդը պատրաստ է կատարելու ձեր բոլոր պահանջները, բացի հրացաններ յանձնելուց, որովհետև այլ ևս ոչ մի հրացան չէ մնացել գիւղում:

Մինչև Լամիսղանիից հեռանալը, զօրքը ազատօրէն է գործում: Բացի ութը տուն և տասչորս սարայներ այրելուց, մի քանի տներ կոտրած դռան և ամեն ինչ տարած: Այս տարի անգին քանակութեամբ գինի էր ստացվել և պահում էին, որ ամառը ծախսեն հանեն, սակայն իզուր. մառան մառանները և ինչ կարողացան խմել խմեցին, իսկ ինչ չը կարողացան, կարասների մէջ հող ածեցին և փչացրին գինին:

Զօրքը բանակած է նոյն պէս Ճաշա գիւղում, Կասպիում, և այդտեղ էլ մեծ վնաս են հասցրել գիւղին:

(Ցնորիս Փուրցելի)

ՄԵՐ ՑԱՒԸ ԾՈՎ Է

—Մեր ցաւը ծով է, անյատակ ծով: Մեր արտասուքը ծովի ջրի պէս՝ աղի:

Ահա ինչ լսեցի ես, երբ կիրակի, յունվարի 22-ին, գնացի Հաւլաբար, մտայ այն տունը, որտեղ պատսպարված են կրդանցիները—կրօնափոխութեան, խայտառակութեան բռնաբարվածները—և բաղցիները, և մտայ մի սենեակ, կամ աւելի ճիշդն ասել, մի գոմ, որտեղից բուղ էր փչում և լսվում էին մարդկային ժխորի խուլ աղաղակներ:

Այդ այցելութիւնը ինձ վրա սաստիկ ճնշող տպաւորութիւն թողեց: Ես տեսայ և համոզվեցի, թէ ինչպէս մենք, քաղաքացիներս, գիտենք խնամել, պատսպարել թշուառներին, սփոփել, ամոքել վշտերը, ցամաքեցնել արտասուքը: Ես տեսայ մեր պորտաբոյծ հոգևորականութեան, մեր պոռոտախօս ինտելլիգենցիայի, մեր փափկասուն բարեգործուհիների, ամեն օր Սօլօլակի փողոցները չափող արիստոկրատների կարեկցութեան, եռանդի չափը՝ հրից ու սրից փախած, վշտահար հայ գիւղացիների և գաղթականների վերաբերմամբ:

Թիֆլիսը լի է կրօնաւորներով, քահանաներով և սակայն ոչ մի հոգևորական, բացի մի քահանայից, որի դերը նոյնպէս շատ գովասանական չէ, չը զգաց անհրաժեշտութիւն՝ գնալ հոգևոր մխիթարութիւն տալ այդ հէք և թշուառ արարածներին, հնչեցնել նրանց ականջին սիրոյ, աւետարանի ջերմացնող խօսքերը: Արժէ միթէ անհանգստանալ. միթէ ոսկէ գաւազանները նրա համար են շինված, որ մուտք գործեն խրճիթը, գոմը. չէ՞ որ նրանք աւելի սազական են Սօլօլակի փարթամ տներին և կացարաններին:

Թիֆլիսը լի է բժիշկներով և սակայն բացի բժիշկ Իգիթխանից, որ առանց այն էլ ծանրաբեռնված է Հաւլաբարի հիւանդանոցներով, ամբողջ օրը կառքի մէջ բազմած Սօլօլակի փողոցները չափչփող էսկուլապներից ոչ մինը չը մտածեց մի ժամ էլ, մի քանի րոպէ էլ նուիրել ցաւերից տառապող, հիւծվող, մաշվող դժբախտներին, հրոյ և սրոյ զոհերին:

Թիֆլիսը ունի բարեգործական ընկերութիւն, որը, սակայն, բարեգործութիւնը հասկանում է այն մտքով, թէ կարօտեալը պէտք է կանցելեարական եղանակով, յայտարարութիւններ, խնդրագրեր տալով բախէ ողորմութեան և գթութեան դուռը:

Թիֆլիսը լի է ինտելլիգենտ ոյժերով և, սակայն, ինտելլիգենցիան, բացի մի շատ նեղ շրջանից, մատ-մատի չը խփեց Թիֆլիս ապաստանած թշուառ հայ փախստականներին որ և է աջակցութիւն, պարապմունք հայթայթելու:

Այո, Հաւլաբարի Ադամեանի տունը ամենապերճախօս ապացոյցն է մեր անճարակութեան, ապիկարութեան և, անտարբերութեան ու անսրտութեան:

Եւ մեր այդ յատկութիւնների խորն դատապարտութիւն իմ ականջին խփեցին այս խօսքերը, երբ ես մտայ այն գոմը, ուր կրդանցիները խառն-խուռն նստոտած էին:

—Մեր ցաւը ծով է, անյատակ ծով: Մեր արտասուքը ծովի ջրի պէս՝ աղի:

Խոնաւ, հողի յատակի վրա կուչ եկած նստած էին տանջված դէմքեր, մեծ մասը կանայք, երեխաներ: Անտանելի հոտ էր փչում. օդը ճնշող և հեղձուցիչ էր: Այդ խոնաւ հողի յատակի վրա իրանց փալասները տարածելով պառկում են մօտ 50—60 անձինք: Ինձ ասացին, որ այդտեղ եղել են և վարակիչ հիւանդութեամբ տառապողներ, բայց այժմ նրանց առանձնացրել են:

Մի պառաւ, շրջապատված մի քանի կանանցով, լացում էր, և լացում էր լուռ, անմռունչ:

—Ինչու՞ է լացում, հարցրի ես:

—Այս գիշեր աղան մեռել է:

—Միթէ բժիշկ չէ գալիս:

—Ինչպէս չէ, գալիս է, բայց ինչ կարող է անել մի բժիշկ. խնամք պէտք է, լաւ օդ, լաւ սնունդ: Բժիշկը գալիս է, տեսնում, դեղ պատուիրում, բայց ով է հսկողը: Միթէ այսպիսի տեղում հիւանդը կարող է առողջանալ:

Դուռը բացվեց. ներս մտան մի քանի տղամարդիկ, կատարեալ թուրքեր. բեխերը խուզած, խինայած, գլուխնին ածիլած: Եթէ ես չիմանայի, որ նրանց բռնի մահմեդականացրել են, ես երբեք չէի կարծի, որ նրանք հայեր են:

—Ասացէք, խնդրեմ, կը կամենայի՞ք վերադառնալ ձեր գիւղը, Կրդան, հարցրի ես:

Ոչ, անկարելի է. մեր գիւղը մի հատի՛կ է, շրջապատված մօտ 20 թուրք գիւղերով: Ապրել այսուհետև թուրքերի հարևանութեան մէջ, անկարելի է:

—Քանի՞ տուն էր ձեր գիւղը:

—Երեսուն և հինգ:

—Քանի՞ հոգի դեռ գտնվում են գերութեան մէջ, թուրքերի մօտ:

—Դեռ մօտ 100 հոգի:

—Ինչ լուր ունէք նրանց մասին:

—Գիտենք, որ դեռ չեն կոտորել նրանց:

—Ինչու՞ մահմեդականութիւն ընդունեցիք:

—Եթէ չընդունէինք, կը կոտորէին մեզ ամենքիս:

—Բայց միթէ հաւատում էին ձեր անկեղծ կրօնափոխութեան:

—Սկզբում, այո, բայց յետոյ սկսեցին կասկածել և թուրք կօմիտէտների կողմից եկած մի պատգամաւորի դրդմամբ, որոշեցին սպանել մեզ ամենքիս: Եթէ կօզակները այդ օրը հասած չը լինէին, այն գիշերը մեզ ամենքիս կոտորելու էին:

Ես դուրս եկայ կեղտոտ, ցեխոտ բակը:

Ես ամաչեցի, իբրև նպաստամատոյց յանձնաժողովի անդամ, որ նա հարկաւոր հսկողութիւնը չէր կատարել թշուառ կրդանցիների խնամատարութեան գործի վրա:

Պէտք է ասեմ, որ երբ յունվարի 8-ին կրդանցիները եկան և յանձնաժողովի կարգադրութեամբ նրանց ուղարկեցինք Հաւլաբար, Ադամեանի տունը, որի վերին յարկում, լաւ սենեակների մէջ տեղ էինք տուել բաղցիներին, տեղական քահանաներից մինը, Տէր-Ղևոնդ անունով, Հաւլաբարում բնակող մի քանի անձանց հետ, կազմել էին մի մասնաժողով, դրամ հաւաքել և իրանց ձեռքն առել նրանց խնամատարութեան գործը: Յանձնաժողովի նախագահ առաջնորդն ևս տուել էր իր հաւանութիւնը, որ այդ մասնաժողովը գործէ:

Դժբաղդաբար մասնաժողովի եռանդը շուտ է սառչում և քահանան գործը յանձնելով մի վերակացուի, խնամատարութեան գործը ընկնում է եղկելի վիճակի մէջ:

Այսօր յանձնաժողովը գումարվելու է՝ զբաղվելու համար այդ խնդրով:

Բայց յանձնաժողովը ոչինչ չէ կարող անել, եթէ Թիֆլիսի ինտելլիգենցիան գոնէ այդ տեսակ հարցերի մէջ չօգնէ նրան.

Հ. Ա.

ԲԱԳՈՒԻ ՄԱՀՄԵԴԱԿԱՆՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ

IV

Ինչպէս մեր նախորդ յօդուածում ասացինք, պ. Աղայեվ բոլորով հանդէս եկաւ «Баку» լրագրում, Բագուի հասարակական ժողովարանի ամառային շինութեան մէջ նոյ. 27-ին տեղի ունեցած մահմեդական միտինգի մասին «Каспій» և «Հայաթ» թերթերում տպված նկարագրութեան դէմ:

Ահա թէ ինչ է գրում պ. Աղայեվ:

«Каспій» լրագրի № 231-ում, տեղի ունեցած մահմեդական միտինգի մասին տպված տեղեկութիւնների մէջ այնպիսի կոպիտ սխալներ և անճշտութիւններ կան, որ միանգամայն աղաւաղում են յիշեալ միտինգի բնաւորութիւնն ու ոգին: Նախ «Каспій»-ի լրատու-աշխատակիցը քմահաճօրէն ինձ է վերագրում այսպիսի մի խօսք. իբրև թէ ես ասել եմ, որ «Թագաւոր-կայսրի ամենքան ողորմածօրէն շնորհած ազատութիւնները»... Յետոյ լրատուն գրում է. «պ. Հաջինսկի պ. Աղայեվին ընդդիմախօսելով ասաց, որ յիշեալ ազատութիւնները շնորհված չեն, այլ նուաճված ռուս պրոլետարիատի ոյժով»... Ես վճռապէս յայտարարում եմ, որ այդպիսի խօսք իմ բերանից դուրս չէ եկել երբեք և չէր էլ կարող գալ, որովհետև ես բաւականացայ միայն հօկտեմբերի 17-ի ազատութիւնները մեկնաբանելով, բացատրելով և ցոյց տալով նրանց կենսական նշանակութիւնը ոչ միայն իւրաքանչիւր հասարակութեան, այլ իւրաքանչիւր անհատի համար: Իսկ ինչ վերաբերում է իմ բարեկամ և համախոհ պ. Հաջինսկուն, նա հեռու է ինձ ընդդիմախօսելու մտքից, ընդհակառակը նա միայն իմ գաղափարները աւելի պերճախօսութեամբ, աւելի փայլուն կերպով ընդլայնեց, բացատրելով մահմեդականներին, թէ ում են նրանք պարտական այդ ազատութիւնները:

Մի այլ տեղ «Каспій»-ի լրատու-աշխատակիցը խօսելով պ. Այֆազովի նամակի մասին, ուր նա յայտնում էր նախապէս մահմեդականներին սօցիալ-դեմօկրատների ցանկութեան մասին շրջելու քաղաքում—գրում է. «Պ. Այֆազով խնդրում է յայտնել ժողովին, թէ արդեօք հաճելի է մահմեդականներին ընդունել նրանց»: Պ. Այֆազով, որի նամակը իմ ձեռքումն է, այդպիսի խնդիրք չէ անում. ընդհակառակը նա յայտնում է իր համոզմունքը, որ մահմեդականները կը դիմաւորեն սօցիալ-դեմօկրատներին սրտագին ուրախութեամբ, ինչ որ մահմեդականները՝ իրանց ինտելիգենցիայի առաջնորդութեամբ ապացուցին այնքան փայլուն կերպով:

Ամենից աւելի կոպտութեամբ աղաւաղված է մանաւանդ միտինգի վերջաւորութիւնը: «Каспій»-ի համեմատ, միտինգը իբրև թէ ընդունել է հետևեալ որոշումը. «Բագու քաղաքի մահմեդական հասարակութիւնը՝ երկրորդ անգամ քաղաքական միտինգ գումարելով՝ դարձեալ արտայայտեց իր ուրախութիւնը հոկտ. 17-ի մանիֆեստի առթիւ»...

Մինչդեռ ահա րեզօլիւցիայի իսկական բովանդակութիւնը, որը խմբագրել եմ ես ինքս. «Բագու քաղաքի մահմեդականները 1905 թ. նոյ. 27-ին միտինգ գումարելով, ողջունում են հոկտ. 17-ի մանիֆեստով յայտարարված ազատութիւնները: Բայց պահանջում են, որ այդ ազատութիւնները իսկապէս մըտցնվեն, իրագործվեն կեանքի մէջ, յօգուտ խաղաղութեան և կարգի շուտափոյթ հաստատման Ռուսաստանում: Բացի դրանից մահմեդականները պահանջում են որ, 1) Անյապաղ գումարվի Սահմանադիր Ժողով, 2) Իրաւունք տրվի ուղղակի, հաւասար, գաղտնի և ընդհանուր ձայնատուութեան:

Վերջացնելով նամակս, խնդրում եմ ի դիմաց մահմեդական միտինգների կազմակերպողների «Каспій»-ի լրատուից, այսուհետև աւելի ուշադիր լինել և չաղաւաղել գոնէ տեղի ունեցած վիճաբանութիւնների և րեզօլիւցիաների գլխաւոր մասերը: Դա աւելի ևս հարկաւոր է նրա համար, որ «Հայաթ» լրագիրը դարձաւ «Каспій»-ի երկրորդ տպագրութիւնը, որովհետև այս վերջին լրագրում թարգմանվում և տարածվում է հետևեալ օրն և եթ այն բոլորը՝ ինչ տպվում է «Каспій»-ում այսօր, իր ամեն սխալներով և աղաւաղումներով հանդերձ»:

Այս նամակին պատասխանում է «Каспій»-ի րեպօրտեօր լրատուն: Միւս կողմից «Հայաթ»-ը՝ իր ստացած ալքին—այն է «Каспій»-ի երկրորդ տպագրութիւնը լինելու ամբաստանութեան, ամբաստանութիւն, որը ուղղվում է պ. Աղայեվի հեռանալուց անմիջապէս յետոյ, պատասխանում է հետևեալ կերպով.

«Միայն այժմ չէ, որ «Каспій»-ի մէջ այսօր տպվածը հետևեալ օրը լոյս է տեսնում «Հայաթ»-ում: Մենք «Баку»-ից և ուրիշ լրագիրներից միշտ քաղում ենք անկողմնակալ կերպով, այն լուրերը, որոնց հետ հարկաւոր է, որ ծանօթանայ իսլամական ժողովուրդը: Եւ շատ բնական, որ այդ տեսակ լուրերը ռուս լրագրներից մի երկու օր յետոյ միայն լոյս տեսնեն «Հայաթ»-ում, որովհետև ժամանակ է հարկաւոր, որ նախ կարդանք ռուս լրագիրները, մեր կարդացածների մէջ պիտանին ջոկենք, յետոյ այն թարգմանենք և այնուհետև տանք մեր գրաշարներին, որ շարեն: Այսպէս էր լինում և այն ժամանակ, երբ Ահմէդ բէգը մեր լրագրի խմբագիրներից մէկն էր:

Կարծում եմ, որ ռուս լրագիրներն էլ, երբ «Հայաթից» կամ առհասարակ ուրիշ մահմեդական թերթերից մի բան վերցնում են, հազիւ մի, երկու և նոյն իսկ մի քանի օր յետոյ են տալիս իրանց ընթերցողներին: Պօստ-հեռագրական գործադուլի պատճառով, միւս լրագրների նման մենք էլ անկարող եղանք ստանալու մեր թղթակիցների նամակները. և մայրաքաղաքից, ինչպէս օտար երկրներից և առհասարակ իսլամական աշխարհից հասնող լրագրերն ու հանդէսները եկան ընկան պօստատներում և այնտեղ մնացին...

Մեր լրագրի ուղղութիւնը արդէն Աղայեվի ուղղութիւնն է. աշխատակիցները չեն փոխված. Աղայեվի կողմից տրված սկզբնական շարժման համաձայն նա առաջ պիտի գնայ, և նոյն իսկ ոչ թէ պարզ, այլ աճում արագութեամբ, և անկասկած օրէց օր առաջադիմութեան և կատարելութեան ձգտելով: Որովհետև բոլոր կենդանի օրգանիզմները, ենթակայ էվօլիւցիօնիստ օրէնքին, ինչպէս ապացուցել է անցեալ տարի Անգլիայում վախճանված էվօլիւցիօնի ամենամեծ փիլիսոփանչակաւոր Հերբերտ Սպենսէրը»:

Եւ «Հայաթը» շարունակում է իր ընթերցողներին լուսաբանել այս առթիւ, թէ ինչ է էվօլիւցիայի օրէնքը: Նա ասում է, որ «Թայմզ»-ներ և «Ֆիգարօ»-ներ առաջ գալու համար տարիներ է հարկաւոր և մանաւանդ լրագրների կատարելութիւնը համեմատական է կատարելութեանը այն ժողովուրդների և ազգերի, որոնցից խօսում են այդ լրագրերը: Եւ մի այնպիսի լրջութեամբ, որի խորքում թաքնված է սուր հեգնութիւնը, «Հայաթ» ասում է. «Անգլիացի Կարլէյլի տառածութեան հակառակ՝ «ազգն առաջ վարողները» ոչ թէ Աղայեվներն են, այլ ֆրանսիացի Տէնի կարծիքի համաձայն, ազգն է, որ Ահմէդ բէգ Աղայեվների նման օժտված և իմաստուն մարդկանց առաջ է քաշում...

«Ազգը երէկ մի Ահմէդ բէգի երեան բերեց: Այսօր երկուսին, երեքին ծնունդ կը տայ, վաղը հինգին, տասին, յետոյ հարիւրներին: Եթէ յարգելի Ահմէդ բէգ Աղայեվը զլանայ իր գեղեցիկ յօդուածներով ու սիրուն գրուածներով մեր լրագրի էջերը զարդարել, այդ չէ նշանակում, որ «Հայաթ» լրագիրը «Каспій»-ի երկրորդ տպագրութիւնը կամ նրա մի պատուասուն է: Ալեքսանդր Մակեդոնացին շատ մեծ մարդ էր. բայց միթէ դրա համար կարէք կայ սեղաններ ջարդելու... «Հայաթ»-ի բաղձանքը, ձգտումն է, ոչ թէ «Каспій»-ից, այլ զանազան լեզուներով հրատարակվող թերթերից էլ կատարեալ լինել:

Եթէ այդ նպատակին հասնելու համար «Հայաթ»-ի բռնած ճանապարհը սխալ ճանապարհ է, մենք կը խնդրէինք յարգելի Ահմէդ բէգ Աղայեվից մեզ ճանապարհ ցոյց տալով, որքան կարելի է շուտ դնէր մեզ ուղիղ ճանապարհի վրա:

Մասնաւորապէս, յեղափոխական շարժումների և դրա հակառակ յետադիմական գործողութիւնների այս ծանր ու երկիւղալի ժամանակում մեր ազգը անուղղեցոյց թողնել անկարելի լինելով՝ կը խնդրենք, որ «Իրշադ»-ի հրատարակութիւնը մի քիչ շտապեցնեն»:

Ինչպէս նկատեցին մեր ընթերցողները, փոխանակված աքացիները մեղմ են, բայց այնուամենայնիւ նրանք մնում են աքացիներ:

Բայց, մեզ ամենից աւելի հետաքրքրողը այս բանակռւում, ոչ թէ խմբագիրների պստիկ վէճերն են, այլ այն հոգեկան ընդհանուր տրամադրութիւնը՝ որ ցոյց է տուել Բագուի մահմեդական հասարակութիւնը, հոկտեմբերի 17-ի մանիֆեստին յաջորդող պատմական անմոռանալի օրերում: Եւ հէնց այդ նպատակով էլ մենք ձեռնարկեցինք այդ յօդուածների շարքին:

Բագուի թուրք ազգաբնակութիւնը, իր առաջնորդողների բերանով, հանդէս է գալիս իբրև անընկճելի պաշտպան յայտարարված ազատութիւնների: Նա, յանձին պ. Աղայեվի, նոյն իսկ հակվում է դէպի ծայրայեղ ձախակողմը: Թէ մահմեդական հասարակութեան այդ անակնկալ և ուրախալի դիրքը ո՞ր աստիճան, ինչպէս ասել—անկեղծ, համոզված, ո՞չ աւելի ճիշդը՝ կայուն, տևական, հետևողական է—կը տեսնենք յաջորդ անգամ:

Տ. Զաւէն

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նոյեմբերի 26-ին

Թիֆլիսի դէպքից յետոյ յուզիչ լուրեր հասան դէպի մեզ Բօրչալուի գաւառի Թրիալէթի մասում ապրողներից: Լրաբերներից մէկն էր Եղոսփլի գիւղի բնակիչ յայտնի աւազակ, որը եկել էր Թիֆլիսի հայերից կողոպտս տանելու. այդտեղի դէպքերից չը կարողանալով օգտվել, լուրը հասցրեց Թրիալէթ, որտեղ ապրում էինք մի քանի հայ բնակիչներս, Միխայէլ Տօնոյեանց և ես, Ռուբէն Տօնոյեանց. մենք երկուսս պարապւում էինք երկրորդ կարգի վաճառականութեամբ. իսկ միւսներն էին Մնացական Եղիազարով, որը պայտար էր, միւսը Օհանէս, կօշկակար, չորրորդն էր այրի կին Սօֆիա Գոծակալեանը: Սրանք բաւականին մեծ գերդաստան են, որոնց թիւը կը հասնի մօտ 35 հոգու:

Երբ ամսի 26-ին, ժամի երկուսին, լուրը հասաւ Բաշքէչէ գիւղը, այդ լուրին համեմատ, ես գնացի պրիստաւ Զալ Զ. Զալիօվի մօտ և խնդրեցի, որ օգնի մեզ: Նա չը տուեց օգնութիւն, և բարկացած պատասխանեց. գնա քեզ համար փողով օգնական ճարիր, ինձնից մի յուսայ, որ ես քեզ կօգնեմ, ստրաժնիկ չունեմ: Բայց այն ժամանակ բացի իր ստրաժնիկներից, Ծալկի ուրիադնիկը իր մի քանի ստրաժնիկներով այդտեղ էին. նա իբրև ուղարկում էր օգնելու կողոպտված պանրի գործարաններին, որը արդէն կողոպտված և քարուքանդ էին եղած և բնակիչներից որը սպանված և որը փախել էին զանազան տեղեր: Երեկոյեան ժամի 7½-ն էր, որ վրա տուեին մեր խանութին. ես առանց օգնութեան մենակ էի մնացել, պ. Զալ Զ. Զալիօվը լսեց այս խուժանի գիւղը մտնելը, կողպեց լուսամուտները և դռները: Այդտեղ էր և մեր խանութը մօտ 60 սաժէն հեռաւորութեամբ. խանութը երեք կողմից շրջապատեցին և սկսեցին դուռը կոտրել. այդ ժամանակ երեք գնդակ արձակվեց մեր կողմից. երբ նրանք սկսեցին զալպ տալ, ես անօգնական հեռացայ խուժանից. դռները կոտրեցին և տարան մօտաւորապէս 48,000 րուբլու ապրանք, երկու հնեակին կանֆկարասիքը, ոսկեղէն և արծաթեղէն, տաւարներ, ոչխարներ, խալիչաք, ցորեն մօտ 300 թաղարի չափ և գարի նմանապէս. երբ յայտնվեց այս բոլորի մասին Բօրչալուի գաւառապետին, գաւառապետը հրամայեց Զալիօվին և տուեց կօզակներ՝ իբր յետ խլէ այդ կողոպտված ապրանքը. բայց անօգուտ. դեկտեմբերի 21-ին գաւառապետի հրամանով յետ տուեին մի քանի մութաքայ և մի քանի հատ էլ խալիչա. դարձեալ սպասում ենք գաւառապետի կարգադրութեանը:

Ռ. Տօնոյեանց

ՄԻ ՔԱՆԻ ԱԶԴԵՐ

Հայ դաշնակցութեան պատասխանատու կօմիտէն հրատարակել է մի յայտարարութիւն, որի բովանդակութիւնը հետևեալն է:

Քանի որ վերականգնվում են հայերի և թուրքերի նախկին ցանկալի բարեկամական յարաբերութիւնները,

Քանի որ նրանք որ և է առիթ չեն տալիս ու չեն տալ թշնամութեան և յուզմունքի,

Քանի որ նրանց մէջ նկատվում է ինչ-ինչ պատճառներից դրդված հաշտվելու ցանկութիւն,—մենք, հայերս, որ միշտ ձգտել ենք խաղաղ գրական հաշտութեան և կուլտուրական խաղաղ կեանքի—մենք ամեն կերպ պիտի ընդառաջ գնանք մեր խաւար, իր խէղճ ու չարը չը ճանաչող հարևան ժողովրդին հասկացնելու եղբայրասպան կռուի խայտառակ անմտութիւնը: Ուրեմն բացի նրանից, որ հայը չը պիտի յանդգնէ որ և է կերպ վիրաւորանք հասցնելու թուրքին (սրա մասին խօսք անգամ չի կարող լինել), թող հայ քաղաքացիների ամեն մէկը, օգտվելով յուզված կրքերի բացակայութիւնից, բաց անի թուրքի մտաւոր աչքերը, դժբախտութեան իսկական պատճառները ցոյց տալու համար. իսկ Դաշնակցութեան ամեն մի գիտակից անդամ թող հանդէս գայ թուրքերի մէջ, բացատրի նրան որ կօմիտէները չեն դաւեր լարում երկու ազգերի մէջ, որ յեղափոխ. կօմիտէները խռովարարներ երբեք չեն կարող լինել, որովհետև ամեն տեղ, աշխարհի ամեն ծայրում, ուր ճշմարտութիւնը ոտնատակ է եղած, արդարութիւնը՝ խեղդված, իրաւունքը՝ բռնաբարված, ամեն տեղ այդպիսի վայրերում, յեղափոխական կօմիտէներ են առաջացել և խեղդողների ու բռնութեան դէմ յամառ կռիւ մղել. եթէ խռովարար լինէին նրանք ապա ո՞վ պիտի կռուէր ազատութեան համար՝ ստրկութեան դէմ...

Դաշնակից մեր ընկերները թող պատմեն նրանց, մեր թուրք հարևաններին, թէ ինչպէս 15 տարուց ի վեր ճնշված ժողովուրդների՝ թուրքերի, քրդերի և այլ ազգերի համերաշխութեան մասին քարոզել է Հ. Յեղ. Դաշնակցութիւնը և կռուել է միմիայն բռնութեան ու բռնապետութեան դէմ:

Այժմ էլ այս յեղափոխական ուժգին պայքարի արիւնոտ օրերում Հ. Յ. Դաշնակցութիւնը քեզ է կանչում թուրք ճնշված, հարստահարված ժողովուրդ. բաց արա մտքիդ խաւար աչքերը, տես քո մերձաւոր և հեռաւոր թշնամուն ու քո իսկական բարեկամին՝ հայ ժողովրդին:

Բէկերի ու հարուստների համար ինչ հոգս, ա՛յ աղքատ ու խեղճ թուրք—հայ ժողովուրդ, թէ դու սովամահ ես լինում, կռուից միայն դու ես տուժում, միայն դու ես քարուքանդ լինում:

Ուրեմն ձեռք ձեռքի տուէք երկու ազգերի ճնշված, հարստահարված աշխատաւոր մասսաներ, ընդդէմ ձեր իսկական թշնամիների, և այն ժամանակ մեզ հետ միասին կանչեցէք. «կեցցէ համերաշխութիւնը հայ և թուրք ժողովրդների, կորչի թշնամանանքը:»

—

1905 թ. 18-ին դեկտեմբերի Երևան քաղաքում կայացաւ Հնչակեան կուսակցութեան մի ժողով, որին մասնակցում էին քաղաքային խմբերի 20 խմբապետներ, գիւղական երկու շրջաններից 5 ընկերներ, Հնչակեան վարչութեան 3 անդամներ և 25 Հնչակեան ընկերներ:

Ժողովի քննութեան նիւթն էր 1905 թ. սեպտեմբեր ամսի Պարիզում տեղի ունեցած համագումարի անունից նոյեմբերի 1-ով յայտարարված շրջաբերականը:

Այս շրջաբերականը հակառակ համագումարին մասնակցող սօցիալ-դեմօկրատ պատգամաւորների, հակառակ համագումարի գումարման նպատակին, որը որպէս արտակարգ պատգամաւորական ժողով կազմվել էր ազատելու Հնչակեան կուսակցութեանը այն հակասութիւնից, որի մէջ նա գտնվում էր և հակառակ 1904 թ. սեպտեմբերին կայացած Հնչակեան կօնֆերենցիայի որոշման *) յայտարարում է.— «որ Հնչակեան կուսակցութիւնը որպէս մի ուրոյն քաղաքական յեղափոխական կուսակցութիւն, պէտք է շարունակէ իւր գործունէութիւնը մեր ծրագրի տուած սկզբունքներով—որպէս մի ամբողջութիւն մի ընդհանուր կենդրոնով, մի պաշտօնական օրգանով (Հնչակ), մի ընդհանուր կասսայով,—ընդունելով Թիւրքահայ դատը կուսակցութեանս ամենաառաջին գործը: Ռուսաստանումն էլ պէտք է գործել սօցիալ-դեմօկրատական սկզբունքների վրա համերաշխ Ռուսաստանում գործող սօցիալ-դեմօկրատների հետ»:

Քննելով այս շրջաբերականը և

1) Ի նկատի ունենալով, որ Հնչակեան կուսակցութիւնը անցեալում որպէս մի ամբողջութիւն նուիրված էր լոկ Թիւրքահայ դատին և դրանով ներկայացնում էր «Հայ ազգայնական կուսակցութիւն».

2) Ի նկատի ունենալով, որ այն օրից, երբ Հնչակեան կուսակցութիւնը Ռուսաստանում յայտարարելով սօցիալ-դեմօկրատական գործունէութիւն, նկատվեց երկդիմի քաղաքականութեան մէջ, մէկ կողմից լինելով սօցիալ-դեմօկրատ և միւս կողմից ազգայնական կուսակցութիւն.

3) Ի նկատի ունենալով, որ Հնչակեան կուսակցութեան Ռուսաստանի մասնաճիւղերը որպէս սօցիալ-դեմօկրատական կազմակերպութիւն այլ ևս անկարող են կապված մնալ Թիւրքահայ ազգայնական գործունէութեան հետ և **)

4) Ի նկատի ունենալով որ Հնչակեան կուսակցութեան Ռուսաստանում ունեցած առանձին կազմակերպական գոյութիւնը սահման է ստեղծում զանազան ազգութիւնների պրոլետարիատի մէջ և թուլացնում է նորա դասակարգային ինքնաճանաչութիւնը,

Ժողովը միաձայն որոշեց.

Միանալ Ռուսաստանի Սօցիալ-Դեմօկրատական բանւորական կուսակցութեան հետ և կոչվել Ռ. Ս. Դ. Բ. կ-եան Երևանի կազմակերպութիւն»:

Միութեան մանրամասնութիւնները կը յայտարարենք, երբ մեր կովկասեան կօնֆերենցիան կը վերջանայ:

Ծանօթ.—Այդ կօնֆերենցիան կազմվել էր Հնչակեան կուսակցութեան կենդրօնական Վարչութեան հրաւէրով, որը որոշել է.—«ընդունել Ռ. Ս. Դ. Բ. կ-եան ծրագիրը, առ այժմ գործերը առաջ մղել միշտ համերաշխ Ռ. Ս. Դ. Բ. կ-եան հետ, միաժամանակ մշակելով և ամեն միջոց գործ դնելով կարելիին չափ շուտով իրագործելու միութիւնը» (շրջաբերական №6):

Ծանօթութիւն.—Այս բաժանումը պահանջում են նաև տաճկահայ Հնչակեան մասնաճիւղերը և բուլղար—ռումինիոյ պատգամաւորական ժողովը իրանց Պարիզի վերջին համագումարին ուղղած գրութեամբ. այս գրութիւնը Հնչակեան կուսակցութեան կենդրօնական վարչութեան կողմից վավերացրած պատճէնները գտնվում են Երևանում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԳՐԱՒԱԿԱՆՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

—

Պատմական ներկայ րոպէին, երբ Ռուսաստանի բազմամիլիոն ազգաբնակութիւնը ոտք է դնում ազատութեան նախագաւիթը, բիւրաւոր արիւնալի զոհերով ձեռք բերելով՝ անձնական իրական անձեռնմխելիութիւն, խղճի, խօսքի, մամուլի, ժողովների ու ընկերակցութիւնների ազատութիւնը—ահա կրկնում եմ այս վայրկեանին—ազատված քաղաքացիներին անհրաժեշտ է գիտակցօրէն վերաբերվել կառավարութեան զիջողութեանը:

Նուիրելով ներկայ թարգմանութիւնս կովկասահայ ազատ քաղաքացիներին, կը ցանկայի, որ նրանք, լաւ ըմբռնելով ազատագրական շարժման այս յաղթանակները, ազատութեան հրեշտակի թևերի տակ արտայայտեն իրանց մէջ թաքնված քաղաքակրթական կորովը, հանդիսանալով չքնաղ, դրախտավայր Կովկասի առաջնակարգ գործօններից մէկը:

Ազատ քաղաքացիներից՝ նուաճած մարդկային իրաւունքները անխախտ պահելու համար պահանջվում է անհուն եռանդ, ոյժ և կորով:

Ներկայ բրօշիւրը լուսաբանում է, թէ ո՞րն է իրական անձեռնմխելիութիւնը: Հայ ընթերցողները կը համոզվեն, թէ անգլիական, այդ կատարելապէս ազատ ազգը, ինչպիսի յամառութեամբ ձեռք բերեց անձնական ազատութեան անսասան գրաւականները և ինչպիսի խանդավառութեամբ պաշտպանել է նրանց ա՛նգլիական կառավարութեան նենգամիտ որոգայթներից, արդարացնելով հայկական այն առածը, որ ասում է՝ «գող կայնի, գերան կը կտրի»:

Ռ. Զախմախչաղեանց

I

Անձի ազատութիւնը՝ ամենևին երկրորդական տեղ չէ գրաւում իրաւական իդէալների շարքում, որոնց իրագործմանը այնպիսի անձկանքով սպասում է այժմ ամբողջ ռուս հասարակութիւնը: Այս իդէալը բացառապէս ռուսական կեանքի մի արգասիք չէ հանդիսանում: Պատմութիւնը վկայում է, որ չէ եղել մի ժողովուրդ, որը ձգտած չը լինի իր ազատութիւնը վարչական կամայականութիւնից պաշտպանելու: Անթիւ արիւնոտ զոհերը, որ մարդկութիւնը տուել է ազատութեան զոհարանին, պերճախօս ապացոյց են հէնց նոյն իդէալի արժէքի և կարևորութեան: Նրա նշանակութիւնն է վկայում և այն, որ խղճի, մըտքի, խօսքի, մամուլի, հասարակական ժողովների ու խմբակցութիւնների ազատութեան հետ միասին՝ XVIII-րդ դարի քաղաքական ականաւոր մտածողները անձի ազատութիւնը՝ «բնական, բնածին և անքակտելի մի իրաւունք» յայտարարեցին, որը հէնց իրան՝ պետութեան համար էլ մի անձեռնմխելի սրբութիւն պիտի հանդիսանայ: Ահա ինչու, երբ 1789 թ. ֆրանսիական թագաւորը դասակարգային ներկայացուցիչներից ազգային ժողով գումարեց, վերջինիս անդրանիկ գործը ոչ թէ սահմանադրութեան մշակումը եղաւ, այլ—բնական, հիմնական իրաւունքների ցուցակագրումը: Այդպիսով երևան եկաւ «մարդու ու քաղաքացու իրաւունքների ծանուցագիրը» 1):

Այս տեսակ ծանուցագրեր յետագայում մի մի քանի անգամ են հրատարակվել թէ Ֆրանսիայում և թէ եւրոպական միւս պետութիւնների մէջ: Այս տեսակէտից Անգլիան զարմանալի բացառութիւն է կազմում: Իզուր կը լինէր այս երկրի օրէնսդրական յիշատակարաններում գոնէ մի ակնարկ որոնել անձի բնածին ու բնատուր իրաւունքների մասին: Մի և նոյն ժամանակ անձի ազատութիւնը Անգլիայում աւելի է ապահովված, քան թէ ուրիշ քաղաքակրթված երկրներում: Այն ինչ, երբ վերջին երկրներում անձի բնական ու բնածին իրաւունքները միայն թղթի վրա էին նշանակված, Անգլիայում նրանց իրագործումը աւելի վաղ ու աւելի հաստատ էր ապահովված, քան թէ մի որ և է ուրիշ երկրում: Յիշեալ երկրների մէջ եղած այդ զարմանալի զանազանութիւնը բացատրվում է նրանց քաղաքական զարգացման միանգամայն տարբեր ընթացքներով: Անգլիայի քաղաքական պատմութիւնը ներկայացնում է մի բազմադարեայ մաքառում՝ անգլիական ժողովրդի արքայական իշխանութեան հետ, որի ընթացքում ժողովուրդը կամաց կամաց, քայլ առ քայլ իր քաղաքական ու քաղաքացիական ազատութիւնն էր ապահովում, մինչև որ վերջ ի վերջոյ, բարձրագոյն իշխանութիւնը ամբողջապէս անցաւ ժողովրդական ներկայացուցիչների ձեռքը:

Այլ էր Ֆրանսիայի քաղաքական պատմութիւնը: Արքայական իշխանութիւնը միջին դարերում չափազանց թոյլ էր: Սակայն, օգտվելով դասակարգերի փոխադարձ խորշումից, կամաց-կամաց ամրացաւ և ամբողջապէս իր ձեռքն առաւ բարձրագոյն իշխանութիւնը: XVII-րդ դարում Լիւդովիկոս XIV-ը ամենայն իրաւամբ կարող էր արտասանել—l'etat c'est moi—(պետութիւնը—ես եմ), իսկ նրա յաջորդը անպատիժ կարողացաւ դեկլամարել—apves nous le deluge—(ինձնից յետոյ թէկուզ ջրհեղեղ)—սկզբունքով: Շատ բնական է, որ այսպիսի թագաւորները ամենևին տրամադիր չէին լինի ընդունել ու ճանաչել իրանց հպատակների որ և է իրաւունքը: Բիւրոկրատիական խնամատարութեան և ոստիկանական կամայականութեան երկարատև տիրապետութիւնը կործանարար ազդեցութիւն թողեց ֆրանսիական ազգի վրա: Վերջինիս կորցրեց ամեն մի ընդունակութիւն դէպի հասարակական ինքնագործունէութիւն և ամեն մի քաղաքական տակտ, ընտելանալով ամեն բանում յոյսը կառավարութեան վրա դնել, և բաւականաչափ էլ—կառավարչական կենտրոնացման և խնամակալական կարգերին: Ահա ինչու՞ ֆրանսիացիները քաղաքացիական ու քաղաքական ազատութիւն ստանալու համար ընդունակ եղան՝ յեղափոխութիւն անել, ամբողջ Եւրոպայի քաղաքական քարտէզը կերպարանափոխել, բայց միաժամանակ ցոյց տուին իրանց կատարեալ անընդունակութիւնը այն բոլորը պահպանելու, որի համար այնքան սեփական և օտար արիւն էր թափվել—այսինքն բաղձալի ազատութիւնը պահպանելու համար: Ահա ինչու 1789 թ. յեղափոխութեան վախճանը Նապոլէօն I կայսրութիւնն է, իսկ 1848 թ. հանրապետութիւնը Նապոլէօն III կայսրութիւնով վերջացաւ:

Ասածներս բաւական են այն բացատիկ նախապատմութեան համար, որը արվում է Անգլիայի՝ անձնական ազատութեան անհրաժեշտ գրաւականների ուսումնասիրութեան խնդրում: Ահա ինչու՞ յետագայումն էլ մեր ամբողջ ուշադրութիւնը, գլխաւորապէս անգլիական կարգերի վրա ենք կենտրոնացնելու: Սակայն այդ կարգերը լաւ հասկանալու համար, տեսնենք, թէ ինչպէս և ո՞րպիսի պայմաններում ստեղծվեցին նրանք, մինչև որ ընդունեցին այն կատարեալ ձևը, որ վերագրվում է նրանց անխտիր բոլոր ազգութեան գրողներին: 2)

II

Ազատութեան ու անկախութեան սէրը վաղուց ի վեր յատուկ էր թէ գերմանական ցեղերին, որոնք վերաբնակվել էին Անգլիայում X-րդ դարից սկսած և թէ վերջիններին XI-րդ դարում նուաճող նօրմանդացիներին: Բայց այդ ազգերի բոլոր ձգտումները՝ իրանց ազատութիւնը ապահովելու արքայական իշխանութեան ծայրայեղ ոտնձգութիւններից՝ երկար ժամանակ ի զուր էին անցնում: Արգելք էին հանդիսանում թէ նուաճող նօրմանդացիների ու նուաճված անգլօսաքսերի մէջ տիրող թշնամութիւնը և թէ տարբեր հասարակական դասակարգերի փոխադարձ գժտութիւնները: Հէնց այս պատճառով Անգլիան նօրմանդացիներից նուաճվելու հետևանքներից մէկն էլ թագաւորական իշխանութեան հզօրացումն էր՝ ի վնաս ժողովրդի ազատութեան և իրաւունքների: Ճիշդ է, աւելի՝ խոհեմ թագաւորները սովորաբար հանդիսաւոր ձևով խոստանում էին՝ յարգել այդ ազատութիւնը ու իրաւունքները: Բայց խոստումները միշտ չէին իրագործվում: Ինչ վերաբերում է իշխանաւորներին, որոնք աւելի հետամուտ էին անձնական շահերին ու քմահաճոյութիւններին բաւականութիւն տալուն—ամենևին մտքով էլ չէին անցկացնում ժողովրդի իրաւունքները:

Անգլիացիները երկար ժամանակ դիմանում էին թագաւորական իշխանութեան չեղծումներին: Իսկ երբ գահը Յովհաննէս Հողազուրկը ժառանգեց, ժողովրդի համբերութեան բաժակը արդէն լցվեց: Զարմանալի էլ չէ: Բարոյական կողմից կատարեալ անձնաւորութիւն լինելով՝ Յովհաննէսը այնպիսի կեղեքումներ, բռնութիւններ և չեղծումներ էր կատարում, որ իր դէմ յարուցեց հասարակութեան բոլոր խաւերն ու դասակարգերը:

Ընդհանուր դժգոհութիւնը սաստկացաւ այն ամօթից, որով ծածկվեց երկիրը արքայական քաղաքականութեան շնորհիւ: Ֆրանսիայի հետ մղած պատերազմով Անգլիան զրկվեց իր բոլոր ֆրանսիական գաւառներից: Թագաւորի ընդհարումները պապի հետ ստիպեցին վերջինին ամբողջ երկիրը կրօնական արգելման ենթարկել, ամեն տեղ դադարեցին ժամասացութիւնը, եկեղեցական ծէսերն ու օրէնսդրութիւնները: Չը բաւականանալով այդքանով, պապը բանադրանքի ենթարկեց թագաւորին, գահազուրկ յայտարարեց նրան և հպատակներին հաւատարմական երդումից ազատեց, գահ նստեցրեց Յովհաննէսի ախոյեանին, այսինքն Ֆրանսիայի Փիլիպպոս թագաւորին: Ժողովրդից անպաշտպան մնալով, Յովհաննէսը պապին հպատակվեց: Սա էլ յետ վերցրեց

1) Ծանուցագրի ծագումը, էութիւնը և նշանակութիւնը բաւականաչափ լաւ պարզաբանված են հետևեալ բրօշիւրում: Проф. Еллинекъ. „Декларація правъ человѣка и гражданина". Переводъ под. ред. А. Вормса. Изд. Библіотеки для Самообразованія. ц. 40 к.

2) Պատմական այս պրօցեսը պարզապէս ըմբռնելու համար շատ օգտաւէտ է Անգլիայի պատմութեան հետ ծանօթանալ: Այդ նպատակին կարող է ծառայել Գրինի «Անգլիական ժողովրդի համառօտ պատմութիւնը», որը մի համառօտ, բայց վերին աստիճան բովանդակալից ու հանրամատչելի ձեռնարկ է: Гринъ. „Краткая исторія англійскаго народа". Перев. подъ ред. Шамонини. Три выпуска.

Ժողովը ընտրելով Ռ. Ս. Դ. Բ. կ-եան ժամանակաւոր կոմիտէտ, յանձնարարից իւր այս որոշումը յայտարարել ի գիտութիւն հասարակութեան և յեղափոխական կազմակերպութիւնների:

Ռուսաստանի Ս. Դ. Բ. կ-եան Երևանի ժամանակաւոր կոմիտէտ:

ՄԵՆՔ ԱՆՏԱՐԲԵՐ ԵՆՔ

(Նամակ Ախալքաղաքից)

—

Ուղիղ տասն ու մէկ ամիս է, ինչ մեր լրագիրների էջերը լցվում են հայի ցաւերով:

Արիւն, կրակ, հրդեհ, Թալան-Թալան գիւղեր, առանց գլխի մարմիններ, արախողխող կին ու մանուկներ, քաղցած, մերկ ու անօգնական Թշուառներ—ահա սրանք են մեր օտարներիս լսած ու կարդացածը:

Նոյն լրագիրների միջոցով հասաւ մեզ մեր հայրենակիցների, հարազատների աղաչանքը ու պաղատանքը որոնք, բացի իրանց մարդկային գոյութիւնը պահպանելուց, ոչինչ չեն պահանջում: Նրանք չէին պահանջում զոհեր, ոսկու դէզեր, չէին պահանջում մեր բոլոր ունեցածը, այլ միայն մեր աղքինքի մի չընչին մասը միայն՝ մի փոքր օգնութիւն—չոր հացի փող...

Մենք մնացինք անտարբեր:

Այժմ վերջին հեռագիրները գուժում են, որ մի քանի տեղերում, նոյն իսկ գաւառներում սով է, ժողովուրդը զրկվում է վառելիքից, լոյսից և զանազան անհրաժեշտ պիտոյքներից: Նոյնպէս և անխուսափելի են նոր կոտորածները, նոր աւերումները, նոր հրդեհները...

Կարդում ենք այդ սրտամաշ տողերը, այդ անտուն, անտիրական, քաղցած, փողոցներում Թափառող հայրենակիցների կոչերը և աղերսանքները և էլի մնում անտարբեր:

Այո, կարդում ենք, բոլէքալէս յուզվում, գուցէ և արտասվում, և մոռանում ու շարունակում մեր անհոգ ու անտարբեր կեանքը:

Մասամբ նրանց ձայնը արձագանք գտաւ գիւղացի ուսարականների սրտերում, նրանք ցանկացան օգնել, ով ինչով կարող էր, ոմանք իրանց քրտինքով աշխատած կոպէկներով, ոմանք անձամբ վերադառնալով հայրենիք մասնակից լինելու հասող Թշուառութիւններին:

Յետ չը մնաց և հարուստ ու ունևոր դասակարգը: Նա էլ օգնեց, նա էլ տուեց: Բայց վայ էն տալին, վայ էն ողորմութեան, որ նա էր անում... Ասենք մեղադրել էլ չէ կարելի՝ որովհետև հայ հարուստը սովոր է միայն ստանալու, իսկ տալու, ոչ:

Կոտորածի սկզբից սկսեցին Թշուառացածների օգտին փող ժողովել: Նրանք տուին կոպէկներով և րուբլիներով, միևնոյն ժամանակ հազարների հաշւելով: Նրանցից շատերը գըժուարանում են օգնել ամենամօտիկ բարեկամին, իսկ գիշերներով կանաչ սեղանի շուրջը նստած դժուարանում չեն հարիւրներով տանուլ տալ: Նա չէ դժուարանում, որովհետև խաղին էլ իր առանձին բաւականութիւնը ունի, իւրաքանչիւր ուժանողի և խնդացողի հետ նոր կեանք է ստանում նա...

Մեզ մօտ, կամ Անդրկովկասի երկրի ուրիշ քաղաքներում Թղթախաղը ունի մեծ երկրպագուներ: ՄԹնում է Թէ չէ, աղքատ գործակատարից սկսած մինչև հարուստ «խաղէինը» շտապում են «կլուբ» այս անգամ յետ տանելու երեկվայ տանուլ տուածը, բայց աւաղ, այս անգամ էլ է գնում, եկող անգամ էլ և շարունակ գնում. այդ նրանց տարօրինակ չէ Թւում, չեն ափսոսում տարվածի վրա, որովհետև Թղթախաղը դարձել է արհեստ, գիշերային անաքանդութեան արհեստ:

Մեր հասարակութեան մի մասն էլ բոլորովին չեզոք է պահում իրան: Նրան չեն վերաբերվում կոտորածները, Թալանվածները, սոված, մերկ կարօտեալները: Նա արդարանում է նրանով, որ մինչև օրս լրագրում չէ կարդացել, Թէ իրանց գիւղն էլ քարուքանդ եղաւ, կործանվեց և նպարութեամբ աւելացնում է, որ իրանց գիւղը անառիկ է, մարդիկ քաջ են և այլն:

Բայց սԹափվիր հայ մարդ, դէն ձգիր քո վրայից անգութ անտարբերութեան շղԹանքը, եղիր գիտակից, այս լինել չը լինելու օրերում մտածիր լրջօրէն. չէ՞ որ լոկ խօսքերը պատճառաբանութիւնները փոր չեն կշտացնի, քաղցածին ուժ և զօրութիւն չեն ներշնչի, չէ՞ որ մի բուռն քաջերով պարծենալը, լոկ գովասանքը ազգ չի պաշտի: Օգնիր, քանի դեռ ուշ չէ, քանի հեռագիրները չեն գուժել, որ ձեր հայրենակից քաջերը, որոնք ձեր պատուի, ձեր անուան համար Թշնամու գնդակներին կրծքով դիմադրում են, սովամահ եղան, Թէ Թշնամին բռեց տարաւ նրանց ունեցածը, Թալանեց ու հրդեհեց այդ անառիկ գիւղը:

ՍԹափվիր, քանի դեռ ուշ չէ...

Տ. Մելիք-Յուսէֆեան

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Սպիտակ քաղաք, յունվարի 23-ին

Ահա ձեզ մի տիպար՝ օրէնքը գործադրողների:

Մեր Սպիտակ-քաղաքում կայ մի պրիստաւ, ազգով Թուրք, ազգանունով՝ Ախունդով:

Մարդը հեմ պրիստաւ է, հեմ զինուորական—օֆիցէր:

Օգոստոսեան ընդհարումների ժամանակ, ասում են, այդ մարդը կարք նստած, վազել է Ահմեդլու, Բեշլու Թուրք գիւղերը և մեծ ջանքերով կարողացել է յետ դարձնել հազարաւոր Թուրք ձիաւորներ, որոնք իբր Թէ պէտք է յարձակվէին մեզ՝ Սպիտակ-քաղաքիս հայերի վրա:

Եւ ի հարկէ մեզանում էլ կան երախտագէտ մարդիկ, որոնք երբեք չեն կարող մոռանալ պրիստաւի «ծառայութիւնները»:

Բայց մի բան էլ արևի պէս պարզ է, որ եթէ չը լինէր մեր կռիւձների վախը, իրօք՝ իրականութեան մէջ դուրս կը գային այն երևակայած ձիաւորները...

Լաւ է հին զալմանը քամուն չը տանք... Նոր առակ լսարուք:

Սպիտակ-քաղաքի հարաւային ծայրում, Մանթաշեանի և «Ելէքտրական-ուժ» գործարանների մօտիկ՝ կազմվել է մի բաւական ստուար բնակչութիւն, մեծամասնութիւնը ռուսներ, իսկ վերջերումս բաւական Թւով էլ Թուրքեր, որոնք մօտակայ Ահմեդլու գիւղցին են և պարապվում են առաւելապէս խանութպանութեամբ:

Ահա հէնց այդ Թուրքերն էին, որ մի երկու շաբաթ առաջ, երկու բանակի բաժանված, սկսում են իրար վրա մի անկանոն հրաձգութիւն:

Թէ ինչ նպատակ է լինում այդ բանը անելիս, դա Թողնենք Ալլահին իմանալու. միայն այս էլ ասեմ, որ հրաձգութիւնը այնքան սաստիկ է լինում, որ ռուսները լեղապատառ են լինում, իսկ հայերն էլ իսկի ուշ չեն դարձնում:

Դէպքի տեղից ոչ հեռու գտնվող կոզակները հասնում են և այն է պատրաստվում են կրակելու, երբ յանկարծ, որտեղից որ է, վրա է հասնում մեր քաջ պրիստաւը և արգելում կոզակներին, ասելով:

—Բան չունեք, դա կարող է մի հանաք լինել, Թող ստուգենք:

Մօտենալով կռւողներին, նա սկսում է Թուրքերէն լեզւով մի ճառ.

—Ա՛յ դուք անխելք, յիմար, ձեր եղբայրներին «այնտեղ» (իմա Ղարաբաղ) կոտորում են, (իբր հայերը) իսկ դուք այստեղ իրար մէս էք կրծում. ամօԹ ձեզ, հազա՜ր ամօԹ...

Մինչ նա իր հայրական խրատներն էր կարդում, կոզակները առանց կարգադրութեան՝ սկսում են մօտիկ Թուրք խանութները խուզարկել, որտեղերից՝ նրանք իրանց աչքերով տեսել էին կրակելիս:

Այստեղ պատահում է մի մազալու դէպք:

Երբ կոզակները մտնում են մի խանութ էլ խուզարկելու, պրիստաւը չէ ուզում Թողնել, ասելով.

—Այդտեղ բան չունեք. դա մի խեղճ մարդ է, ես դրան ճանաչում եմ:

Մինչև խօսքը կը վերջացնէր, կոզակները այդ «խեղճ» մարդու դօշակի տակից հանում են մի բերդանկա...

—Հը՜մ..., կմկմում է պրիստաւը:

Զարագործներից մի քանիսը բերում են ոստիկանատուն, իրանց զէնքերն էլ հետները:

Մի երկու ժամից յետոյ բռնվածներին բաց են Թողնում, իսկ զէնքերը մնում են պրիստաւի մօտ:

Միւս օրը քաղաքից ինչ որ «կոմիսէ» է գալիս, հաշտեցնում է կռւող համագիւղացիներին, իսկ նրանց զէնքերը պրիստաւից առնում՝ յանձնում է իրանց տէրերին...

Օրէնքը լա՛ւ «գործադրվեց»...

Այն էլ ասեմ, ո՛ր պրիստաւը իր այդ խաղաղասիրական գործերը մենակ չէ վարում. նա ունի մի հաւատարիմ «օգնական՝» Մելիք անունով և մի հանճարեղ ֆինանսիստ՝ Սէյիդ մականունով...

Չէ, Թշուառ չէ Սպիտակ-քաղաքը:...

Ա. Համբարձումեան

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Յունվարի 21-ին

Շտապում եմ «Մշակ»-ի № 11-ի մէջ Մորակ ստորագրութեամբ Նուխուց գրված ԹղԹակցութեան առԹիւ մի երկու խօսք ասել աւելորդ զրպարտութիւնների առաջն առնելու՝ միևնոյն ժամանակ ճշմարտութիւնը պարզելու համար:

1) Մորակի յօգուածում յիշված յանձնաժողովը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել Արեշի գաղթականների Ղայարաշուց հարևան գիւղերը ցրվելում: Գաղթականները կարեքից ստիպված իրանք ինքնաբերաբար ցրվել են միւս գիւղեր, Ղայարաշում տարածահ չը լինելու պատճառով:

2) Պ. Մորակն ասում է. «Ղայարաշում ինքնապաշտպանութիւնը հիանալի կազմակերպված է»: Ցաւօք սրտի պիտի ասեմ, որ ոչ Թէ հիանալի է կազմակերպված Ղայարաշում ինքնապաշտպանութիւնը և ընդհանրապէս Նուխու շրջանում, այլ շատ Թոյլ և համարեա ոչինչ: Ապացոյց, երբ լավեց Դալի-Ալին մտադիր է Ղայարաշու վրա յարձակվել, ղայարաշեցիք անմիջապէս վեկիլներ ուղարկեցին Նուխու փոխանորդի մօտ, որոնք յաջորդաբանում քաղաքիս բանիմաց հայերից այդ առԹիւ կայացած ժողովում արտասուալից աչքերով օգնութիւն, մի ճար էին աղերսում, խնդրում էին զօրք բերել տալ, խոստանալով նոյն իսկ զօրքին իրանց հաշւով պահել: «Մենք հարիւր զինված Թուրքերին անգամ չենք կարող դիմադրել, որովհետև զէնք չունենք, ռազմամԹերք չունենք, մի քանի հրացաններով ինչ կարող ենք անել. մենք կորած ենք, ի սէր Աստուծոյ, մեզ պաշտպանելու համար զօրք բերել տուէք»:

Այդ ժողովում խմբագրվեցին հեռագիրներ և ուղարկվեցին ում և ուր հարկաւոր էր Թէ վեկիլների և Թէ փոխանորդի կողմից, որոնց հետևանքն այն եղաւ, որ Ղայարաշի ուղարկվեց 33 զինուոր մի սպայի հետ, որոնք մինչև այժմ այնտեղ են: Բացի այդ, յիշեալ զինուորների սպան, որ մի վրացի երիտասարդ է, երկու շաբաԹ առաջ երբ քաղաքս էր եկել, պատահաբար ծանօԹացայ նրա հետ իմ մի բարեկամիս տանը, որտեղ նա հրաւիրված էր գիշերելու: Սպան ի միջի այլոց այս էլ ասաց. «Ղայարաշեցիների հետ ծանօԹանալուց յետոյ երբ լսեցի Դալի-Ալու մտադրութիւնը, որ շուտով պէտք է յարձակվի գիւղի վրա, առաջարկեցի գիւղացիներին յայտնել ինձ իրանց ոյժը,—որքան զէնք ունեն: Բանից դուրս եկաւ, որ խեղճերը զուրկ են զէնքից. ահագին հարստութիւն ունեցող Ղայարաշի ժողովուրդը մի քանի հրացան միայն ունի, այն էլ Աստուած հրացան համարէ, երեք անգամ կրակելուց յետոյ պէտք է դէն ձգել, իսկ այդ տեսակ հրացաններն էլ իւրաքանչիւրը հազիւ միայն քսան երեսուն փամփուշտ ունի:»

Ա՞յս է պ. Մորակի հիանալի կազմակերպութիւնը: Չունեցած բանով ինչ միտք ունի պարծենալը:

3) Սխալ է Մորակի և այն կարծիքը Թէ՝ «քաղաքիս սիւննիների պատուաւոր ներկայացուցիչները շիաներից համարեա անջատված՝ հայերի հետ համերաշխ են գործում»: Թէ սիւննիների և Թէ շիաների իշխաններն ու հոգևորականութիւնը հաւատացնում են, որ երբեք Թոյլ չեն տայ Նուխում և գաւառում կոտորած առաջանայ: Ապացոյց՝ սիւննիների զաղին, պերճաբան Ֆէյզուլլա էֆենդին, շիաների ախունդն ու երկու աղաներից էլ երեք երեք իշխան մարդիկ փոխանորդ վարդապետի և մի պատուաւոր հայի հետ շրջեցին գաւառիս Զաքաթալայի կողմի գիւղերը քարոզելու Թուրք գիւղացիներին, որ հեռու մնան կոտորած առաջ բերելու մտադրութիւնից: Այդ մարդիկ ապսպրում են դաչաղներին (փախստական աւազակներ) վերջ տալ քաղաք երԹևեկող մարդկանց կողոպտելուց, որոնք և ամեն խօսք են տալիս: Դրանց վերադառնալուց և նոյն իսկ գիւղերում եղած ժամանակից սկսվեց ճանապարհների կանոնաւոր հաղորդակցութիւնը:

Հոկտեմբերի 13-ի դէպքը քաղաքումս շիաների Թաղում մի Թիւրիմացութիւնից էր առաջացել:

4) Ո՞րտեղից իմացաւ պ. Մորակը, որ Ֆաթուլլայի սպանողները շիաներից են կաշառված: ՄէԹէ կարելի է մանաւանդ ներկայ պայմաններում այդ տեսակ բան ասել: Ֆաթուլլա-բեկը յայտնի է իր կարճութեամբ. նա աւազակների հոգեհանն էր եղել ինչպէս և Արեշի գաւառներում. քանի՜ քանի՜ գողեր, աւազակներ է բռնել, սպանել, ծեծել, Սիբիր աքսորել տուել, որով որքան Թշնամիներ է վաստակել: Վերջերս երբ քաղաքացիք՝ հայ, Թուրք նրան մի պահակախումբ յանձնեցին ճանապարհները աւազակներից մաքրելու, սարսափ տարածվեց չորս կողմերս վխտացող աւազակների վրա, որոնց Ֆաթուլլան մեծ և խայտառակ մահ էր սպառնում: ՄԷ՞Թէ կողոպտվող մարդկանց մէջ քիչ կային շիաներ: Ոչ, բացի աւազակներից, ոչ շիաները և ոչ սիւննիներն ու հայերը կուզէին Ֆաթուլլայի մահը:

5) Նուխեցիներին էլ է պ. Մորակը կազմ ու պատրաստ համարում ամեն մի պատահարի համար: Վերջերս հայերը իրանց միջից 48 երիտասարդ են ընտրել գիշերները հայոց Թաղի փողոցներում, գիրքերում հսկելու, սրանք հիանալի կազմ ու պատրաստ են ըստ Մորակի, միայն զէնք չունեն, գոնէ ատրճանակ...

Պ. Զ.

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Միւշկիւր գաւառամաս, յունվ. 20-ին

Ղուբայի Միւշկիւր գաւառամասը մեծ մասամբ բաղկացած է մահմեդական գիւղական ազգաբնակութիւնից, որի մօտ 3/5 մասը կազմում են սիւննիները:

Հարկաւոր ենք համարում նկատել, որ Միւշկիւրի մահմեդականները շատ սիրալիր յարաբերութեան մէջ են իրանց հարևան գիւղերի՝ հայ և ռուս ժողովրդի հետ: Հայ-Թուրքական անմիտ եղբայրասպան ընդհարումները զըզուանք և միաժամանակ խոր ցաւակցութիւն են պատճառում տեղական մահմեդական ժողովրդին:

Միւշկիւրը տարիներից ի վեր յայտնի լինելով իր մէջը ակամայից հիւրընկալող անհանգիստ, գող և աւազակ տարրերով, հետևապէս, գիւղական խաղաղ ժողովուրդը շարունակ ենԹարկվում է այդ տարրերի ամարդի և յանցաւոր գործողութիւններից:

Մասնաւորելով մեր խօսքը, ներկայ նամակով մենք ուշադրութեան պէտք է առնենք միայն վերջին ժամանակներս այստեղ տեղի ունեցող ծայրայեղ չափերի հասած գողութիւնները:

Օր չէ անցնում, որ այս և այն գիւղերից տաւար, ձի, ոչխար և այլ ապրանքներ չը գողացվեն: Եւ զարմանալին այն է, որ այդ գողութիւնների տարածմանը աւելի նպաստում են տեղական տանուտէրները, որոնց Թւում աւելի աչքի են ընկնում Նարաջան մահմեդական գիւղի տխրահռչակ տանուտէր Նիւսարը և հարաւային-ղրղղ հասարակութեան ոչ պակաս տխրահռչակ տանուտէր Հաջի-Ահմադը:

Հասկանալի է, որ այդ տանուտէրները ազատ, համարձակ գողութիւններով պարապել չեն կարողանում: Դրանք իրանց այդ զզուելի արհեստը բանեցնում են հետևեալ կերպով:

Տանուտէրներին քաջ յայտնի լինելով իրանց շրջաններում եղած գողերի և վերջինների գողացած ապրանքների մասին, կանչում են ապրանքատիրոջը իրանց մօտ և կամ Թէ վերջինս է գնում նրանց մօտ գանգատվելու մտքով, ստանում են ապրանքատիրոջից մի որոշ գումար—խոստանալով ապրանքը գտնել ու վերադարձնել տիրոջը:

Եւ իրաւ, 2—3 օր անցնելուց յետոյ՝ ապրանքատէր գիւղացին ստանում է իրանից գողացված ապրանքը:

Ուրեմն ինչ է նշանակում.—այն, որ տանուտէրները ճանաչում են գողերին (ի հարկէ կը ճանաչեն, որովհետև մեծ մասամբ իրանց մարդիկն են) և փոխանակ ձերբակալելու, պատժելու այդպիսիներին, ընդհակառակ, իրանք են մասնակցում գողութիւններին:...

Որ Ղուբայի ամբողջ գաւառում, գլխաւորապէս մահմեդական հասարակութեան տանուտէրների և ոստիկանական ուրիշ պաշտօնեաների մեծամասնութիւնը՝ իրանց կաշառակերութիւններով, գողութիւններին և մարդասպանութիւններին մասնակից լինելով՝ աւերում են իրանց խնամքին յանձնված գիւղերը—դա փաստ է:

Որ գիւղական ժողովուրդը շատ անգամ, տանուտէրների և կամ Թէ գողերի կողմից սպանվելու երկիւղից, որն այստեղ սովորական մի բան է, չէ կարողանում գանգատվել գաւառապետին, իսկ երբեմն համարձակութիւն ունեցած՝ պրիստաւին ներկայացրած գանգատն էլ մեծ մասամբ անհետևանք է մնում—դա էլ փաստ է:

Ուրեմն մեզ մնում է՝ տեղական գաւառապետի խորին ուշադրութիւնը հրաւիրել գիւղական խաղաղ ժողովրդի համար տղրուկներ եղած այդօրինակ ոստիկանական պաշտօնեաների ապօրինի և իրանց կոչմանը չը համապատասխանող գործողութիւնների վրա:

Օ.

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԴՐ. ԲԱՀ. ԵՐԶՆԿԵԱՆՑԻՆ

—

«Մշակի» № 14 ում տպագրելով Ձեր «բաց նամակը», ուղղած հայոց կոնսիստորիայի ծառայողներին, շօշափել, հանդէս էք բերել մի շարք այնպիսի անհերքելի յանցանքներ, որոնց հեղինակները հասարակութեան կողմից արժանի են զզուանքի և արհամարհանքի, իսկ խղճի և օրէնքի առաջ՝ խիստ պատժի:

Դուք, խօսելով քահանայացուների գործերի տարիներով յետաձգման մասին՝ ակնարկում էք, որպէս Թէ նրանք «անիրաւաբար» ճանաչվել են անարժան «իբրև Թէ պատրաստվելու», որպէս զի այդ ժամանակամիջոցում հանդէս եկած բարերարները «ակերով իւղ ու պանիր դարսեն իրանց մառաններում, գորգերով և կալերներով զարդարեն իրանց սենեակները, անգամ ամուսինների միջոցով ծածուկ փողեր կորզեն, կԹի կով դարձնեն» և այլն:

Յիշեալ տողերից ընԹերցողը այն պարզ գաղափարն է կազմում և այն եզրակացուԹեան գալիս, որ կոնսիստորիայի անդամները գիտմամբ յետաձգելով քահանայացուների գործերը, իրանց համար բաց են անում կաշառակերութեան ճանապարհ ուղղակի կամ անուղղակի ձևով:

Ապացոյ անաչառ քննութեանը Թողնելով այդ ծանր, պատասխանատու և համարձակ քայլը, որ դուք անում էք, ես իբրև նախկին անդամ կոնսիստորիայի և երբեմն Ձեր պաշտօնակից նոյն հաստատութեան մէջ, (1903 Թ. յունվարի 1-ից մինչև 1905 Թ. դեկտեմբերի 31-ը վեճ. կոնսիստորիայի անդամի պաշտօն եմ վարել) յատկապէս կը խնդրէի Ձեզանից յանուն ճշմարտութեան և արդարութեան բացարձակ կերպով յայտնէիք ի լուր հասարակութեան Թէ՝ այդ «կաշառակերութեան» մէջ ես էլ մասնակից—մեղսակի՞ց եմ, Թէ ոչ. արդեօք այդ շնորհքը իմ մէջ էլ կա նկատած—լսած կա՞ք, Թէ բարոյական այդ ախտից ես զերծ եմ:

Բացի այդ, հեգնական մտքով Ձեզ «րեֆորմատոր» անուանող անդամներից ո՞րն է այն մէկը, որ «անաստամ և զզուելի լուրեր ու բամբասանքներ» տարածելու գիտաւորութիւնից հեռու է մնացել և չէ կամեցել ձեզ «ապատուորել»:

Յոյս ունեմ լրագրական երկտող պատասխանով Ձեր բարոյական պարտքը կատարելուց չէք խուսափի:

Գրիգոր քահ. Շերմազանեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս յունվարի 25-ին

Յօգուտ կովկասեան հայ արկածեալների ստացել եմ Վեհափառ կաԹողիկոսի դիւանից 2000 րուբլի, Պետերբուրգի եկեղեցական խորհրդից 2000 ր. Նոր-Նախիջևանի փոխանորդ Մուշէ վարդապետի գրութեամբ 2375 ր. այն է՝ (Չալթր գիւղի հասարակութիւնից 200 ր. նոյն հասարակութեան եկեղեցական գումարից 100 ր., Թոփտի գիւղի հասարակութիւնից 200 ր., Մեծ Սալա գիւղի հասարակութիւնից 500 ր. նոյն հասարակութեան եկեղեցական գումարից 500 ր. ժամաւոր նուիրաբերութիւնից 323 ր. 35 կ., Նիավիթա գիւղի հասարակութիւնից 100 ր., նոյն հասարակութեան եկեղեցական գումարից 50 ր. ժամաւոր նուիրատւութիւնից 107 ր. 20 կ., Կասարինէ աւանի հասարակութիւնից 200 ր. ժամաւոր նուիրատւութիւնից 6 ր. Կամենկատա ստանիցայում Հէքիմեան Կարապետ քահանայի ժողոված 59 ր. Փանձապետեան Մարտիրոս ա. քահանայ ժողոված 13 ր., Բեդելեան Պօղոս քահ. ժողոված 10 ր., Մուշէ վարդապետից 6. 45 կ. ու դրամի փոխադրութեան ծախք): Թիֆլիսում Սարգիս Եղիզարեանից 100 ր., իշխանուհի Մ. Թումանեանից 50 ր., (սա ժողովել է իր բարեկամների շրջանում.) Յովհաննէս Բայչեանից յիշատակ իր հանգուցեալ Մարիամ ամուսնու 25 ր., վանեցի Համբարձ Ծաղիկեանից 3 ր.: Ընդամենը 6553 ր.: Այս գումարն ամբողջապէս յանձնել եմ Վեհափառ Հայրապետից հաստատված յանձնաժողովի պ. գանձապահին:

Նուիրատուների մանրամասն ցուցակը իր ժամանակին կը տպագրվի:

Առաջնորդ Հայոց Վրաստանի՝

Գարեգին Արքեպիսկոպոս

II

Երևան, յունվարի 22-ին

Երևանի ս. Մարիամեան օրիորդաց գպրոցի օգտին անցեալ նոյեմբերի 20-ին սիրողների կողմից տուած «Պարինապետ» կոմեդիայի ներկայացումից մուտք եղած է տոմսակների վաճառումից ու նուէրներից 375 ր. 70 կ. ու ծախք արված է 109 ր. 95 կ. զուտ արդիւնք մնացել է 265 ր. 75 կ. այդ գումարի 201 ր. 75 կ. Հոգաբարձութիւնս ստացած է Երևանի պ. Նահանգապետից, իսկ 64 ր. սիրողներից:

Այդ առԹիւ Հոգաբարձութիւնս պարտք է համարում հրապարակով յայտնել իր շնորհակալութիւնը ներկայացման մասնակցող ու գպրոցի օգտին նուիրաբերութիւններ անող բոլոր յարգելի անձանց:

Նախագահ հոգաբարձութեան՝

Ս. Տէր-Մարտիրոսեանց

Անդամ հոգաբարձութեան՝

Ս. Տէր-Գաբրիէլեանց

III

Մայկոպ, յունվարի 11-ին

Թոյլ տուէք «Մշակի» միջոցով յայտնել իմ խորին շնորհակալութիւնը այն հայ և ռուս Թատերասէրներին և առ հասարակ այն անձանց՝ որոնք Թէ բարոյապէս և Թէ նիւԹապէս աջակցեցին «Շուշեցիների օգտին» տրված ներկայացում-երեկոյԹին: Այդ երեկոյթ-ներկայացումից գոյացած զուտ արդիւնքը ամսիս 10-ին հեռագրով փոխադրեցի Ղարաբաղի Թեմակալ Աշոտ եպիսկոպոսի անունով Շուշի: Փոխադրած գումարն է 337 ր. 45 կոպէկ:

Պատասխանատու կարգադրիչ՝

Եղիշէ Բաղդասարեանց

VI

Վլադիկավկազ, յունվարի 24-ին

«Մշակի» վերջին համարներում մի բանակռիւ է սկսվել Թիֆլիսի կոնսիստորիայի անդամ Գ. քհ. Երզնկեանի և նոյն տեղի ծառայողների մէջ: Որքան էլ այդ բանակռիւը անհետաքրքիր լինի մեր ցաւերով ծանրացած օրերում, բայց և այնպէս՝ որովհետև մեր հասարակական ախտերից մէկն է շօշափված այդտեղ, ուստի արձագանք տալով Գրիգորիս քահանայի կոչին, հրապարակ եմ հանում ձեռքս ընկած վրացերէն մի դոկումենտի հայերէն Թարգմանութիւնը: Ահա նա. «23 դեկտ. 1904 Թ. Թիֆլիս. Յարգելի Եգոր Մուսէիչ, Ձեր նամակն ստացայ ու ձեր խօսքը կատարեցի, ինչպէս դուք էիք կամենում. այս նամակի հետ ուղարկում եմ այն ԹղԹի ռուսերէն Թարգմանութիւնը իր կնիքով և ստորագրութեամբ. խնդրում եմ այս ԹուղԹը լաւ պահէք, շատ կարևոր ԹուղԹ է: Պարոն Եգոր Մուսէիչ, հաւատացնում եմ, որ Ձեր գործը շուտով կը վերջանայ, միայն մի խնդրի է բանը. դուք միամիտ եղէք, հաշւեցէք, Թէ ձեր գրպանումն է. այժմ խնդրում եմ, որ չը նեղանաք և ուղարկէք տասը Թուման (100 ր.), որ շատ հարկաւոր է. ես մինչև այսօր Ձեզանից փող չեմ ուզել, չեմ էլ ստացել. Թէև հարկաւոր է եղել. ես իմ գրպանից եմ ծախսել, մինչև ինքս չը հաւատացի, որ Ձեր գործն արդէն ձեռքումս է: Ես այնպիսի մարդ չեմ, որ մարդու խաբեմ գործի մէջ և երեսս սևացնեմ. Աստուած պատուէ. լաւ իմացէք, որ 6 ամիս է ձեր գործով եմ պարապած և գոհ եմ Աստուծոյ, ջանքերս զուր չանցան: Ներողութիւն, որ վրացերէն լաւ չեմ գրում. սպասում եմ նամակիս պատասխանին. խնդրում եմ շուտով գրէք և ուղարկէք ինչ որ խնդրում եմ: Միամիտ եղէք: Ձեր Բազրատ Օվակիմովիչ Այվազով»:

Նամակը գրված է տեղիս մի վաճառականի, որի Թոյլտւութեամբ և հրատարակում եմ: Նամակում յիշված «կարևոր ԹուղԹը», որ քաղուած է «ի ցուցակէ ժողովրդոց Մուխրանի գեղջ 1847 ամի» և հանված կոնսիստորիայի արխիվից, մի շատ մազալու պատմութիւն ունի, որ եԹէ կարևոր լինի, հրապարակ կը հանեմ: Աւելորդ չեմ համարում աւելացնել, որ ես Երզնկեան քահանայի հետ ծանօԹ չեմ:

Յ. քահ. Սաաիկեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ինչպէս յայտնի է, իշխանութիւնը զէնք պահելու իրաւունք տալիս է գրաւոր նահանգապետի դիմողներին: Մի և նոյն ժամանակ իրաւունք ստացողները պարտաւոր են մի տարուց յետոյ նոր իրաւունք ձեռք բերել նոյն կարգով, իսկ հակառակ դէպքում՝ նրանցից զէնքը առնվում է և իրանք ենԹարկվում են պատժական օրէնքի 117 և 118 յօդ. պատասխանատուութեան: Նոյն պատասխանատուութեանը ենԹարկվում են, եԹէ իրանց իրաւունքը ուրիշին տան: Ուրեմն՝ ամեն մէկ այդպիսի իրաւունք ձեռք բերելու համար մարկաների ծախս է պահանջվում 1 ր. 50 կ., հետևապէս, եԹէ իւրաքանչիւր տարի նոր իրաւունք ձեռք բերելու համար նոյն ծախսը անէ զէնքի իրաւունք ձեռք բերողը, արդեօք այս էլ մի տեսակ նոր հարկ չէ՞ դառնում նրա համար:

—

Ելէքտրաքարշի «հիւանդութիւնը» քրոնիկական կերպարանք է ստացել և ոչ մի կոնսուլիում «հիւանդին» չէ օգնում: Յունվարի 27-ին երԹևեկութիւնը առաւօտից դադարեց՝ մեքենաները փչանալուց և տոկ չը լինելուց. ամեն օր նոր-նոր պատճառներ և նոր-նոր տրտունջներ:

—

Զարմանալի է Թէ ինչ հասկացողութեան տէր մարդիկ են քաղաքային վարչութեան մէջ սակագին նշանակողները: Այս օրերս, չը նայելով մեր մի քանի անգամ ստոյգ աղբիւրներից յայտնած տեղեկութիւններին՝ հացի արհեստական կերպով Թանկացնելու վերաբերութեամբ—սա՛կագին նշանակող անձինք դեռ մի 10 օրով էլ վճռել են ներկայ գները պահպանել՝ հիմնվելով հացավաճառների անտեղի պատճառաբանութեան վրա, որ իբրև վերջիններս՝ ալիւրը ստանալով Բալաջարի վրայով, 30 կ. աւելի են վճարում և հետևապէս՝ ներկայ գների պակասեցնելը վնասաբեր պիտի լինի իրանց համար: Թէ որքան անտեղի է այս առարկութիւնը, ընԹերցողը Թող եզրակացնէ: Նախ ինչ կը նշանակէ 30 կ. աւելի են վճարում քիրէհը: Գուցէ միամիտները կարծում են, ամեն մի պուդի համար են հացավաճառները աւելորդ 30 կ. վճարում. շատ կը սխալվեն, եԹէ այդպէս կարծեն:

բանադրանքը միայն այն պայմանով, որ Թագաւորը պապի վասալը—ստորադրեալը դառնայ: Թագաւորը համաձայնեց ու գնաց Փիլիպպոսի հետ պատերազմելու:

Նրա բացակայութեան ժամանակ անգլիական բարոնները, միանալով հոգևորականութեան հետ, դաւադրութիւն սարքեցին, որպէսզի ստիպեն Յովհաննէսին ընդունել ժողովրդի սեփականութիւն համարված հին իրաւունքներն ու ազատութիւնը: Յովհաննէսի կրած սոսկալի պարտութիւնը Բուվինում ապստամբութեան ազդանշանը դարձաւ: 1215 Թ. յունվարին զինված բարոնները եկան Թագաւորի մօտ և պահանջեցին հաստատել անգլիական ժողովրդի աւանդական ազատութիւնը: Թագաւորը մտածելու ժամանակ խնդրեց, յուսալով զօրք ժողովել բարոնների դէմ կռիւ մղելու նպատակով: Սակայն նրա յոյսերը չը արդարացան: Այս անգամ բարոնները մի առանձին դօկումենտի մէջ ձևակերպեցին իրանց պահանջները և զինադադարից յետոյ, ստիպեցին Թագաւորին ստորագրել այդ ԹուղԹը: Թագաւորը խիստ կատաղեց, երբ կարդաց այդ գրութիւնը: «Ինչու բարոնները այս անօրէն պահանջների հետ միասին Թագաւորական Թագն էլ չեն պահանջում»—ասաց Թագաւորը չար հեգնութեամբ: Պահանջները դատարկ ու անհիմն անուանելուց յետոյ, վճռականապէս յայտնեց, որ նրանց երբեք չի տայ ցանկացած ազատութիւն՝ իրան ստրուկ դարձնելու համար: Բայց աւաղ: Շուտով Թագաւորը ստիպված եղաւ համոզվելու, որ ամբողջ ժողովրդի համակրութիւնը բարոնների կողմն է, իսկ իր պաշտպանները մի բուռն կողմնակիցներն են, կամայ ակամայ, հարկից ստիպուած մեղմացաւ և ստորագրեց բարոնների շարադրած ազատութեան Խարտիան-վաւերագիրը:

Ազատութիւնների այդ Մեծ Խարտիան [3] անգլիացի գրողների միահամուռ կարծիքով, անգլիական ազատութեան հիմնաքարն է համարվում: Այն բոլորը, ինչ ձեռք է բերել անգլիական ժողովուրդը վաւերագրի հաստատութեան օրից սկսած, ոչ այլ ինչ է, եԹէ ոչ նրա հիմնական սկզբունքների յետագայ զարգացումը: Եւ յիրաւի:

Մեծ Խարտիայի մէջ մենք գտնում ենք սահմանադրական նոյն սկզբունքի յայտարարումը, որի համաձայն Թագաւորը կարող է հարկեր դնել միմիայն հարկատուների հաւանութեամբ, մի սկզբունք, որի աստիճանաբար զարգացումը տանում է մեզ դէպի ժողովրդական ներկայացուցչութիւնը և դէպի քաղաքական ազատութիւնը:

Մեծ Խարտիայի մէջ մենք նոյնպէս գտնում ենք քաղաքացիական ազատութեան պարզ ու ճշտօրէն ձևակերպած սկզբունքը:

Ահա Խարտիայի 39-րդ նշանաւոր յօդուածի տառացի, բայց անպաճոյճ բնագիրը, որը այդ սկզբունքն է յայտարարում: «Ոչ մի ազատ մարդ Թող երբեք չը ձերբակալվի, չը բանտարկվի. բռնութեամբ չը զրկւի սեփական հողից, ազատութիւնից ու արտօնութիւններից, օրէնքից դուրս չը դրվի, չը աքսորվի, չը ենԹարկվի որ և է աւերմունքի. մենք նրա դէմ կերԹանք միայն իրան հաւասար մարդկանց օրինական վճռի և երկրի օրէնքի համաձայն»: Հազիւ կարիք լինի ապացուցելու վերոյիշեալ սկզբունքի նշանակութիւնը: ԵԹէ նա իրագործվէր, քաղաքական ազատութիւնը Անգլիայում ամենալաւ ձևով կը ապահովվէր: Նոյնպէս եԹէ իրագործվէր հարկերի դասաւորման վերոյիշեալ սկզբունքը, քաղաքական ազատութիւնն էլ կը իրականանար:

Սակայն ձևակերպել ու հանդիսաւոր կերպով հրատարակել մի սկզբունք, դեռ չէ նշանակում ապահովել նրա տիրապետութիւնը իրական կեանքում բարոնների: Այդ նպատակով ընտրած միջոցը Թէև յեղափոխական բընաւորութիւն էր կրում, բայց իրօք շատ միամիտ և անապահով էր: Նրանք 25 բարոններից բաղկացած մի կոմիտէտ ընտրեցին, որի պարտականութիւնն էր հսկել, որպէս զի Թագաւորը կատարէ վաւերագրի պահանջները, և որը իրաւունք ունէր պատերազմ յայտարարել Թագաւորին, հէնց որ վերջինս բարոնների որոշումները չը կատարէ: Ի հարկէ, այսպիսի մի կոմիտէի սահմանումը շատ դուրեկան չէր Թագաւորին: «Նրանք ինձ վրա 25 խնամակալներ են նշանակել», գոռում էր Յովհաննէսը կատաղի զայրոյԹից գետնի վրա Թաւալվելով: Բայց հանգստանալուց յետոյ, Թագաւորը դիմեց ինտրիգներին, որոնց նա շատ հմուտ էր: Պապը Թագաւորի խնդիրքով Մեծ Խարտիան անվաւեր յայտարարեց, եկեղեցական նզովքի ենԹարկեց ապստամբութեան գլխաւոր ղեկավարներին: Ապա Յովհաննէսը վարձկան զօրքով յարձակվեց բարոնների ջլատված ոյժերի վրա, մի քանի յաղԹութիւններ տարաւ և միայն մահը ստիպեց նրան դադարեցնել կռիւը: Յովհաննէսի 9 տարեկան ժառանգը, ի հարկէ, անկարող էր արքայական իրաւունքները պաշտպանել, ուստի նորից հաստատեց Մեծ Խարտիան: Սակայն ոչ այդ, ոչ էլ յետագայ հաստատումները անկարող եղան ապահովելու այդ Խարտիայի անխախտ գործադրութիւնը: Հէնց միայն այն փաստը, որ երկու հարիւր տարվայ ընԹացքում Մեծ Խարտիան 37 անգամ նորից է հաստատվել, ապացուցանում է, որ նա լաւ չէր գործադրվում: Նոյն փաստն էլ պերճախօս ապացոյց է «Թէ ինչպիսի յամառութեամբ և օրինականութեամբ անգլիացիները ազատութիւն էին ձեռք բերում և Թէ ինչ մեծ նշանակութիւն էին տալիս նրանք իրանց Խարտիային: Դա անգլիացիներին յիշեցնում էր այն պատմական րօպէն, երբ նրանց նախնիքը միացեալ ոյժերով և համերաշխ ջանքերով արքայական իշխանութեանը ստիպեցին՝ ճանաչել իրանց ազատութիւնը:

Այդ յիշողութիւնները յաճախակի դրդում էին հասարակական դասակարգերին մի քանի անգամ խմբվել և վերանորոգել իրանց պահանջները, լրացնելով նրանց նորերով: Շնորհիւ այդ յամառութեան և կեանքի փորձերից օգտվելով, անգլիացիք կարողացան իրանց ազատութիւնը ապահովելու հաստատ միջոցներ գտնել:

Իրաւացի ենԹադրելով, որ այդ ազատութիւնը կարելի է հաստատապէս ապահովել, միայն այն դէպքում, երբ ժողովուրդը իրաւունք ունենայ մասնակցելու՝ օրէնքների հրատարակութեանը, հարկեր նշանակելուն, ծախսերը որոշելուն, ու նրանց վրա հսկելուն—անգլիացիք իրանց բոլոր ջանքերը կենտրոնացրին քաղաքական իրաւունքներ ձեռք բերելու վրա: Արդէն XIII-րդ դարի վախճանին Անգլիայում պարլամենտ է գումարվում, որը բաղկանում էր լօրդերի կամ վերին պալատից,—որի անդամներն էին իշխանների ու բարձր հոգևորականների ներկայացուցիչները—և համայնական կամ ներքին պալատից, որի անդամներն էին ազնուականութեան ու քաղաքային ազգաբնակութեան ներկայացուցիչները:

Զգտելով պարլամենտը քաղաքական ազատութեան մի պատնէշ դարձնել անգլիացիք զգում էին, որ այդ պատնէշը բաւարար չէ քաղաքական ազատութիւնը ապահովելու համար, որ այն սկզբունքի իրականացման համար—ըստ որի ոչ ոք չէ կարող զրկվել ազատութիւնից կամ գոյքից, և որ այդ բանը կարող է կատարվել միայն դատարանի վճռով—անհրաժեշտ է դատարանները լաւ կազմակերպել: Այդ նպատակով անգլիացիները արդարադատական գործեր վարելու իրաւունքը կոմսութիւններում [4] յանձնեցին հաշտարար դատաւորներին, որոնք ոչ Թէ պաշտօնեաներ էին, այլ տեղական ազնուականութեան ընտրեալները: Սրանք աւելի քիչ կենԹարկվէին կառավարութեան ազդեցութեան կարգի պարտէզների ու ներշնչումներին: Նոյն նպատակով անգլիացիք անհրաժեշտ համարեցին արդարադատութեան գործի հրաւիրել հասարակութեան ներկայացուցիչներին յանձին երդուեալ դատաւորների: Իբրև բացառութիւն միւս երկրներից, Անգլիայում նրանք մասնակցում էին ոչ միայն դատավարութեանը, այլ և Թէ նախնական քննութեանը և Թէ քաղաքացիական գործերի քննութեանը: Վերջապէս անկանոն կալանաւորված անձերին ազատութեան վերադարձը ապահովելու համար անգլիացի իրաւաբանները հետևեալ միջոցն էին հնարել: Ամեն մարդ, որը կարծում էր, Թէ իրան անկանոն կամ ապօրինի են կալանաւորել, կարող էր դիմել բարձրագոյն դատարանին կամ այսպէս ասած «Արքայական Նստարանի դատարանին» Habeas Corpus [5]-ի հրամանի պահանջով, որը ուղղված է խնդրատուին կալանաւորող մասնաւոր կամ պաշտօնական անձին, և պահանջում է կալանաւորի «մարմինը ներկայացնել»—(այստեղից էլ առաջ է եկել հրամանի—Habeas Corpus—անունը)—վերոյիշեալ դատարանին: Այդ հրամանը արձակելով, դատարանը պահանջում էր կալանաւորողից, բացի բանտարկեալին ներկայացնելուց դատարանին, մանրամասն տեղեկութիւններ հաղորդել Թէ նախնական կալանաւորման և Թէ յետագայ բանտարկութեան պատճառների մասին: Ստանալով պահանջած տեղեկութիւնները, դատարանը անցնում էր գործի քննութեանը, վճռում էր կամ խալատ արձակել կալանաւորին կամ բանտարկել:

Ազատութիւնից զրկելու բոլոր դէպքերի համար բարձրագոյն դատաստանական ատեանի այսպիսի մի հսկողութիւն սահմանելով անգլիացիները յոյսով էին, որ Թագաւորի կամ վարչական կամայականութեամբ ազատութիւնից փոքր ի շատէ տևողական զրկումը անկարելի կը դառնայ:

(Կը շարունակվի)

---

3) Այս նշանաւոր օրէնսդրական յիշատակարանի ծագման, նշանակութեան և բովանդակութեան մանրամասն լուսաբանութիւնը և նրա իսկական բնագիրը ընԹերցողը կը գտնէ պրոֆեսոր Պետրուշևսկու բրօշիւրում «Великая Хартія Вольностей» Изд. „Донская Рѣчь". ц. 15 к.

4) Երկրի վարչական ստորաբաժանումներում, որոնք համապատասխանում են մեր նահանգներին:

5) Habeas Corpus—Հաբէաս Կորպուս—հրամանի լատինական անունը ցոյց է տալիս, Թէ լատիներէն լեզուն միջին դարերում ինչպիսի տիրապետութիւն էր ձեռք բերել ոչ միայն աստուածաբանութեան, գիտութեան, գրականութեան մէջ, այլ և օրէնսդրական և դատաստանական առօրեայ կեանքում:

Նրանք վճարում են ամեն մի 5 պուդանոց տոպրակ ալիւրի համար, կամ ուրիշ խօսքով —ամեն մի պուդին 6 կ. աւելորդ քրեհ. հարցնում ենք՝ մի՞թէ այդ իրաւունք էր տալիս 6 կ. փոխարէն պուդում աւելացնել ուղիղ 60 կ.՝ վաճառելով 3½ կոպէկանոց հացը մինչև այսօր—ֆունտը 5 կոպէկով: Երկրորդ՝ նրանք Բալաջարով ստանում էին առաջ, այսինքն մինչև Փօթի—Բաթումի և Թիֆլիսի երկաթուղային գնացքների երթևեկութիւնը. արդէն ամենքին յայտնի է, որ շատ ժամանակ է, ինչ որ Փօթից ապրանքները հասնում են Թիֆլիս և հետևաբար Ռոստով—Խերչի ալիւրները. ուրեմն ելի՝ ինչ պատճառ ունէին այդպէս թանգ գնով ծախելու այս ամենաանհրաժեշտ առարկան: Եթէ քաղաքային վարչութիւնը գործին քաջ տեղեակ և իրազեկ մարդիկ չունի սակագին որոշելու այս և այն մթերքի համար, թող, գոնէ, խնդրէ ժողովրդի դրութիւնը ի նկատի ունենալով՝ հրաւիրէ քաղաքացիներից ձեռնհաս և մասնագէտ անձինք, որոնք արդարութեամբ կարող կը լինեն պարզել բանի էութիւնը: «Խուլը սովածին մանր—կը բրդի». հացի սակագին նշանակողները թեթեւութեամբ վերաբերելով գործին՝ մոռանում են թէ որչափ մեծ է քաղաքումս, մանաւանդ ներկայ պայմաններում, կարօտ և չքաւոր դասակարգի թիւը, որոնցից շատերը ցամաք հացով են ապրում:

—

Ստացանք վերջին աղէտից վնասված հայ ընտանիքների օգտին՝ մի ոմնից 5 ր., տաճկաստանցի մշակներից Աղէքսանդր քահ. Տէր-Յովհաննիսեանի ձեռքով պսակադրութեան հանդէսին հաւաքած 1 ր. 70 կոպէկ:

—

Լօնդօնից հեռագրում են «Веч. Газ.» լրագրին, թէ Ստոքհօլմից հեռագրել են այստեղ, որ գործերի դրութիւնը Ֆինլանդիայում յուզալից է: Կուսակցական կռիւը բորբոքվում է. սօցիալ-դէմօկրատները սպառնում են ընդհանուր գործադուլ սարքել այն դէպքում, եթէ կառավարութիւնը չընդունէ իրանց առաջարկած մի պալատեան սիստեմը: Ծայրահեղ կուսակցութիւնները պահանջում են նոյնպէս ընտրողական իրաւունք տալ 21 տարեկան բոլոր ֆինլանդացիներին:

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի ազնուականների ուսումնարանի համար Վերայի մասում, Ուդէլնի փողոցում մի հսկայական հոյակապ տեղական շէնք է շինվում, որի վրա նախահաշւով պիտի ծախսվի 550,000 րուբլի: Ներկայումս այդ մեծ շինութեան մակարդակը արդէն պատրաստ է և մինչև այժմ ծախսված է նրա վրա 300,000 ր.: Այդ գումարից Թիֆլիսի կալուածական ազնուականների բանկը նուիրել է 150,000 ր., մնացած 150,000 րուբլին հանգանակած է մասնաւոր նուիրատուութեամբ որը գլխաւորապէս հանգանակել է պաշտօնաթող վրացի ուսուցիչ պ. Ցիվխտաձէ:

—

Մեր շուկայում ի միջի միւս մթերքների արհեստական կերպով բարձրացել է և բենզինի գինը, որը փոխանակ առաջվայ 1-60 կ. Այս չափազանց գնի վրա քաղաքային իրաւասուներից մէկը դարձրեց վերջին նիստում քաղաքային խորհրդի ուշադրութիւնը: Մեր հաւաքած տեղեկութիւնները միանգամայն հաստատում են գների չափից դուրս բարձրանալը. բենզին վաճառում են և՝ նաւթավաճառները, իսկ յունվարից ամեն օր կանոնաւոր կերպով Բագուի երկաթուղու գնացքները շրջում են, ուրեմն ինչ պատճառ կայ այդ ստրիճանի թանգութեան: Մենք մի քանի անգամ յայտնել ենք և այժմ էլ շեշտում ենք, որ առհասարակ մթերքների գները կանոնաւորելու մի յատուկ մարմին պակասում է քաղաքումս և շատ ապրանք, մանաւանդ անհրաժեշտ առարկաներից. միանգամայն արհեստական կերպով են թանգացրած շահաւէտ վաճառողներից:

—

Մօտ ժամանակներս կառավարչական սենատի ընդհանուր ժողովում կը վճռվի գործադուլների ժամանակ բանւորներին վարձատրելու սկզբունքային հարցը:

—

Ռուսաստանի մօտ 120 քաղաքների և գիւղերի մէջ տեղի ունեցած հրէական ջարդերը, կոտորածները և շահատակութիւնները միջազգային խնդրի կերպարանք են ստանում: Ներկայումս Բրիւսելում հաւաքվում են ամեն կողմից պատգամաւորներ, որոնց ժողովում պիտի քննվի այդ խնդիրը՝ մասնաւոր ներկայացուցիչների և հասարակութեան ներկայութեամբ: Առաջին զեկուցումը պիտի տայ Կիևի պրօֆէսսոր պ. Մանդելշտամ «հրէաների դրութիւնը Ռուսաստանում» խորագրով, յետոյ բժ. Մօցկինը պիտի կարդայ իր զեկուցումը «հրէական ջարդերի մասին», իսկ պրօֆէսսոր Թորբուրգը կը տեղեկացնի «հրէաների գաղթելու մասին»: Այդ ժողովին մասնակցում է և «հրէաների իրաւանց հաւասարութեան ընկերութեան» Պետերբուրգի կենտրոնական բիւրօի պատգամաւորը—որպէս խորհրդակցական ներկայացուցիչ: Ժողովում ներկայ կը լինեն ամեն պետութեան մէջ ապրող հրէաներ:

—

Ռուս-լեհական յեղափոխական կոմիտէտը Բեռլինի Մենդելսօնի բանկային տանը յայտնել է, որ այդ բանկի գլխաւորը դատապարտված է մահուան և, իբր, երկու կին Լվովից արդէն գնացել են Բեռլին այդ դատավճիռը ի կատար ածելու: Դատավճիռը կայացել է յիշեալ բանկի գործողութիւնների պատճառով, որով իբր օգնում է և պահպանում է Ռուսաստանի քաղաքական աբսօլիւտիզմը:

—

Նոր պրօգրեսիւ եկամտի հարկ մտցնելու համար ֆինանսների մինիստրութեան մէջ գործող յանձնաժողովը հետևեալ գլխաւոր կէտերն է մշակել: Այս նոր հարկը վճարելու են բազմատեսակ անձինք և հիմնարկութիւններ, որոնք մինչև այժմ ազատ էին այդ հարկը վճարելուց: Նոյն իսկ եկամտի հարկ պիտի վերցնվի եկեղեցապատկան և վանքապատկան կալուածներից և այլ հոգևոր և աշխարհական անձանց պատկանել ստացուածքներից՝ ինչպէս նաև տէրութեան (ուդել) պատկանել այն հողերից և անտառներից, որոնք որ և է եկամտի աղբիւր ունեն: Բացառութիւն կազմում են Կայսերական տոհմին պատկանող կալուածները: Զատ-զատ անձինքների վերաբերութեամբ՝ հարկ պիտի վճարի ամեն անհատ, որի զուտ եկամտի գումարը 2,200 րուբլուց պակաս չէ, հետևաբար այդ հարկը կը վճարեն և պետական ստորճանաւորները առանց բացառութեան, որոնց ռոճիկը 1,200 ր. պակաս չէ: Ինչ վերաբերում է առևտրականներին, դրամատէրերին (կապիտալիստ) և գործարանատէրերին—հարկը դնվում է նրանց շրջանառութեան մէջ գտնվող դրամագլխներին վրա ամեն մի ձեռնարկութեան համար առանձին-առանձին: Անշարժ կայքերը առ ժամանակ վճարում են իրանց համար սահմանված առաջվայ տուրքերը: Ամեն տեսակ տարաձայնութիւնները վերացնելու համար ստացվածքները ցուցակագրելիս պիտի կազմվի մի յատուկ մասնաժողով՝ ընտրված հարկ վճարողների կողմից այս կամ այն ցեղի: Այդ մասնաժողովը, հարկահանութեան տեսչի նախագահութեամբ, կը զբաղվէ ստացվածքների լուսաբանութեամբ և կը վճռէ այն վիճելի խնդիրները, որոնք վերաբերում են դրամագլխներին և եկամուտների որքանութեան: Ամեն հարկ վճարող ստանում է յայտարարութեան բլանկներ հարցերով, որոնց նա պիտի գրաւոր պատասխան է «մաքուր խղճով» ի դէպս՝ եթէ տուած պատասխանները տարակուսելի երևան—ընտրած մասնաժողովը իրաւունք ունի անմիջապէս ստուգելու:

—

Պետերբուրգի քաղաքային խորհրդի իրաւասուների մի յատուկ մասնաժողով մշակել է քաղաքային ինքնավարութեան նոր պօլօժենիայի նախագիծը: Այդ նախագծով ընտրութեան մասնակցում են երկու սեռի անձինք. ընտրող կարող է լինել ամեն մարդ՝ ով վճարում է քաղաքին մէկ րուբլուց ոչ պակաս: Եթէ քաղաքային խորհրդի վճիռների վերաբերութեամբ ներքին գործերի մինիստրութիւնը որ և է տարակուսանք յայտնէ, ապա այդ վճիռները փոխելու իրաւունքը վերապահված է սենատին:

—

«Нов.» լրագիրը հաղորդում է, որ ներկայումս Օդեսայի նախկին քաղաքապետ Նէյդգարդը ամեն օր այցելում է սենատը, ուր և կարդում է սենատոր Կուզմինսկու ձեռք բերած տեղեկութիւնները, որոնք ապացուցանում են նրա կատարեալ անգործութիւնը Օդեսայում տեղի ունեցած ջարդերի ժամանակ: Սենատոր Կուզմինսկու Նէյդգարդին տուած ժամանակամիջոցը բացատրութիւններ ներկայացնելու համար, վերջանում է այս շաբաթ: Այդ բացատրութիւնների քննութիւնից յետոյ գործը կը ներկայացնվի սենատի առաջին դեպարտամենտը, որը և կորոշէ Նէյդգարդին դատի ենթարկելու հարցը:

—

Լօնդօնում սկսվել է արդէն հրատարակվել անգլիերէն լեզուով «Pro Armenia» լրագիրը՝ յայտնի հրապարակախօս Ա. Սաֆրի խմբագրութեամբ: Թերթի ճակատին զետեղված են, իբրև նշանաբան, Բեռլինի 61-րդ և Կիպրոսի Դաշնադրութեան առաջին յօդուածները: Ուրեմն մենք ունենք երեք «Pro Armenia». մէկը Պարիզում, միւսը Ամերիկայում և երրորդը Լօնդօնում:

—

«Էքօ դը Պարի» լրագրի թղթակիցը Պետերբուրգից հաղորդում է, որ Ռուսաստանում ռէակցիան յաղթանակում է ամբողջ գծի վրա: Բոլոր բանտերը լցված են, ուստի հարց է յարուցվել նոր բանտեր շինելու: Այս օրերս Պետերբուրգից կամենում էին Ռիգա ուղարկել երկու հարիւր կալանաւորված կանայք, բայց այդտեղից պատասխան ստացվեց. «մի ուղարկէք, ամեն տեղ լի է»:

—

Ծայրահեղ-յետադէմ «Моск. Вѣд.», որը մի տեսակ Պանդօրայի արկղ է դարձել ճիւղային կոչեր հրատարակելու արհեստում, հիմա էլ մի նոր զրպարտչական ձևի կոչ է հրատարակել «Հողատէրերի միութեան խորհրդի» բերանից: Այս «միութիւնը»՝ դատափետելով նախկին մինիստր իշխ. Սվեատոպօլկ-Միրսկու կառավարչական եղանակը, որը չընդունելով «չարին չարեաւ կործանի» սկզբունքը, պատճառ դարձաւ վարքերապար կրկնվող գործադուլներին՝ և յիշատակելով գիւղացիական յուզմունքները և նրանց ձեռքով կատարած բռնութիւնները հողատէրերի դէմ ամեն բանի մեղքը փաթթում է անիշխանականների և «պրօլետարիատ-ինտելիգենցիայի» վզին: Իր կողմից «միութիւնը» հողատէրերի իրաւունքների ելակէտը գտնում է ընդդէմ խռովարարների և ըմբոստների—զինուորական դրութիւնը պահպանելու և զինուորական-պատերազմական դատարանի մէջ...

—

Ռուսաստանի մէջ իբր թէ պակաս էին մրրիկները—հիմա էլ մի նոր քաղաքական կուսակցութիւն է կազմվել Մօգիլեվ քաղաքում՝ «Մրրիկ» անունով, որը, ինչպէս ենթադրում է «Бирж. Вѣд.» թղթակիցը, «սևագնդերի» շարքում արմատական կուսակցութեան տեղ պիտի բռնէ: Թէ ինչ տեսակ նոր մրրիկներ պիտի առաջացնի այդ «կուսակցութիւնը»—երևում է նրա յայտարարութիւնից: «Բոլոր ազատագրական շարժումը, ասում է նա—«ջհուդների» բանն է, առաջադէմ կուսակցութիւնը նպատակ ունի հասարակապետութիւն տալ Ռուսիային՝ «ջհուդ» նախագահ և «ջհուդ» մինիստրներ կարգելով գլուխ, որոնք պատերազմ պիտի մղեն քրիստոնէութեան և այն ամենի դէմ—ինչ որ ռուսական է (?!)»: Ամեն տեսակ հայհոյանք թափելուց յետոյ՝ այդ «Միութիւնը» կոչ է ուղղում ռուս ուղղափառ ժողովրդին և առաջարկում է կեանք և ջանք չը խնայել՝ զէնքը ձեռքին պաշտպանելու ուղղափառութիւնը և Ցարի Ինքնակալութիւնը: «Միութիւնը» 100 ռեներբերված անգամ է ճարել և ունի բաժանմունք Հօմէլում, որի մէջ վերջին անգամ կատարած հրէական ջարդը կարծես նրա «առաջին սխրագործութիւնը» լինի: Հրէաներին մնում է բացականչել՝ «Էլի, էլի լամա սաբաքթանի...»:

—

«Бак. Жиз.» թերթի խմբագրութիւնը ուղարկել է հետևեալ յայտարարութիւնը. «Յունվարի 22-ին «Бак. Жиз.» թերթի խմբագրութիւնը ստացաւ Բագուի ոստիկանապետից հետևեալ տեղեկագիրը. «Ի նկատի ունենալով «Б. Ж.» թերթի հասարակական խաղաղութեան համար վնասակար ու փտանգաւոր ուղղութիւնը և Ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեան համաձայն, Բագու քաղաքի և Բագուի նահանգի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի յունվարի 22-ի կարգադրութեամբ «Бак. Жиз.» թերթը փակվում է»: Այդ պատճառով հարկադրված լինելով փակել մեր հրատարակութիւնը, խմբագրութիւնս համաձայնութիւն կայացրեց Բագւում նոր լոյս տեսնող «Бак. От.» թերթի խմբագիր-հրատարակչի հետ՝ «Бак. От.» թերթի համարներով բաւարարութիւն տալու «Бак. Жиз.» թերթի բաժանորդներին»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 յունվարի: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի նախագահութեամբ յունվարի 25-ին կայացած պրօֆէսսօրների ժողովի նիստում, համալսարանական բարենորոգութիւնների համար, սկսեցին քննել պրիվատ-դոցենտների, ասիստենտների և լաբօրանտների ու այլ հարցեր: Զայների մեծամասնութեամբ վճռված է, որ պրիվատ դոցենտները պէտք է ունենան դոկտորութեան աստիճան, իրաւունք ունեն դասախօսելու, գործնական պարապմունքներ ունենալու՝ օգտվելով լաբօրանքներով և ֆակուլտետի ցուցմունքներով, կրթական-օժանդակ հաստատութիւններով տեսուչների համաձայնութեամբ: Պրիվատ-դոցենտների ընտրութիւնները կատարվում են գաղտնի քուէարկութեամբ: Դոկտորութեան կամ մագիստրութեան աստիճան ունեցող իսկական անդամները, գիտութեան ճեմարանի ադիւնկտները և համալսարանների նախկին պրօֆէսսօրները իրաւունք ունեն պրիվատ դոցենտներ լինելու առանց քուէարկութեան: Պրիվատ-դոցենտութիւն կարող են ստանալ ուրիշ բարձր կրթական հաստատութիւնների պրօֆէսսօրները նոյնպէս: Այն անձինք, որոնք այս նոր կանոնադրութիւնը մտցնելու ժամանակ պրիվատ-դոցենտ են եղել, պահպանում են իրանց իրաւունքները մինչև 10 տարի.

ԼՕՆԴՕՆ, 26 յունվարի: Շոտլանդիայից տեղեկութիւն է ստացվել, որ գիւղացիները դրօշակներով ու նուագածութեամբ մակոյկներ նստած գնացել են Վատերսէյ կղզին, որ պատկանում է լէդի Կատկարտին, և տիրելով նրան, սկսել են շինել կոտէջներ: Կղզու մուտքը դժուարացել է:

ՀՕՊԵՆՀԱԳԵՆ, 26 յունվարի: «Դաննեբրոգի» ասելով, Թագաւորի աճիւնը յունվարի 31-ից մինչև փետրվարի 2-ը մնալու է պալատական եկեղեցում: Փետրվարի 3-ին առաւօտը կը տեղափոխեն մարմինը Րօսկիլդի տաճարը թաղելու համար:

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ, 26 յունվարի: Մեռաւ խոշոր դրամատէր և բարեգործ Բուգրովինիկօվը:

ՎԱՐՇԱՎԱ, 26 յունվարի: Ֆինանսների մինիստրը մերժեց Վարշավի տնատէրերի միջնորդութիւնը հարկերի և տուրքերի վճարման համար արտօնութիւններ տալու, և համաձայնուեց միայն բացառիկ դէպքերում յարգել այդ միջնորդութիւնը արքունական պալատի կառավարչի հայեցողութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի: «Наша Жизнь» թերթի յունվարի 23-ի համարում տպագրված է մանրամասն նկարագրութիւն թէ ինչպէս կոմս Վիտտէն ընդունել է Եկատերինօդարի մէշչաններին պատգամաւորութեան: Մենք այժմ լիազօրութիւն ունենք յայտնելու, որ այդ տեղեկութիւնը սխալ է:

ՌԻԳԱ, 26 յունվարի: Գեներալ-նահանգապետ Սալլօգուբի և նահանգապետ Զվեգինցևի հեռանալու լուրը ճիշտ չէ: Պրիբալտեան երկրի այն մասերից, ուր ապրում են էստոնները, հանգստացնող տեղեկութիւններ են ստացվում, իսկ Լատիշական մասերից ստացվում են վրդովեցուցիչ լուրեր: Վինդաւի և Վալկի գաւառներում, զօրքերի հեռանալուց յետոյ փորձում են վերսկսել շարժումները, կատարվում են սպանութիւններ, սրում են Թուեցինկներ, որով սպանում են կոտորել պաշտօնավարութեան մնացած կառավարական պաշտօնեաներին: Այնտեղ սպասում են Րիգայից գեներալ Օրլովին: Գեներալ-նահանգապետի էզօլ կղզին գնալու լուրը անհիմն է: Կէսօրին, քաղաքի կենտրոնում, Կօնի մեխանիկական արհեստանոցում վառօդի պայթիւն առաջացաւ: Տէրը վիրաւորված է և ուղարկված հիւանդանոց:

ՕԴԵՍՍԱ, 27 յուն.: Այրվեց եղբայր Ակամոնի ջրաղացը: Վնասը կէս միլիոն է հասնում: Ներքին գործերի մինիստրութիւնը հաւանութիւն տուաւ Օդեսայի քաղաքային վարչութեան միջնորդութեանը՝ 20,000 րուբլի անգործ ազգաբնակութեան համար յատկացնելու՝ այն պայմանով միայն, որ մի մասը բանեցնվի Խերսոնի նահանգի անգործների օգտին:

ՔՈՒԹԱՅԻՍ, 26 յունվ.: Քաղաքի կենտրոնում ծանր վիրաւորված է Զուգդիդի գաւառապետ Գեդաւօվ: Չարագործը բազմութեան աչքի առաջ անյայտացաւ: Քաղաքի մէջ իրարանցում ընկաւ: Կրպակները փակվում են:

ԹԵՕԴՕՍԻԱ, 26 յունվ.: Հոկտեմբերի 17-ի միութեան բաժանմունք հիմնվեց այստեղ և ազգաբնակութեան կողմից համակրութեամբ ընդունվեց:

ՌՕՍՏՕՎ-ԴՕՆԻ-ՎՐԱ, 27 յունվ.: Քաղաքապետը թոյլատրեց սահմանադրական—ռամկավար կուսակցութեան ժողովը:

ԲԱԳՈՒ, 27 յունվարի: Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը կարգադրութիւն է ստացել անյապաղ հեռացնել երեք օրվայ ընթացքում բնակարաններից այն ծառայողներին, որոնք մասնակցել են քաղաքական գործադուլին:

28 յունվարի

ՍԵՄԻՊԱԼԱՏԻՆՍԿ, 27 յունվ.: Զինուորական դրութեան հիման վրա Պավլօդարում կալանաւորված է Ալիխան Բուկէյխանով, որը Պետական Դումայի համար որոշած թեկնածուն էր, Մոսկվայում նոյեմբերին կայացած զեմստվային գործիչների համագումարին մասնակցող: Կիրգիզների խնդիրը՝ արձակել Բուկէյխանովին իշխանութիւնը մերժեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 27 յունվարի: Կոմս Վօրոնցով-Դաշկովը հեռագրում է Նորին Կայսերական Մեծութեանը յունվարի 25-ին Թիֆլիսից. «Գեներալ-Ալիխանովի յունվարի 23-ի հաղորդագրութեան համաձայն Օզուրգէթ քաղաքի և շրջակայ գիւղերի ազգաբնակութիւնը մաղթանք կատարեց Թագաւոր Կայսրի առողջութեան համար և հանդիսաւոր կերպով հաւատարմութեան երդում տուաւ: Մաղթանքից յետոյ Թագաւորի պատկերը պտտեցրին ամբողջ քաղաքի մէջ օրհներգ երգելով: Գեներալ Գօլօշչապօվի զօրախումբը ազատեց Շուշի—Եւլախ խճուղին, մատակարարեց Շուշուն մթերքներ և բաւ երեսկին հաշտութիւն կայացրեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի: Սօլսկու նախագահութեամբ յունվարի 28-ին առանձին խորհրդի նիստում քննվելու է ագրարական շարժումից վնասված մասնաւոր անձանց նիւթական օժանդակութիւն տալու հարցը, նոյնպէս և շոգենաւային և տրանսպօրտային ընկերութիւններին, որոնք վնասվել են հարաւում անկարգութիւններ եղած ժամանակ:

ՄՕՍԿՎԱ, 27 յունվարի: Փետրվարի 12-ին կայանալու է համառուսական հողատէրերի համագումարը: Քաղաքային ծառայողների գործադուլային խորհրդի պարագլուխ գեներալ Ավերեանօվը ազատված է բանտից:

Բօրսային մասնաժողովը հեռագրով միջնորդում է կառավարութեան առաջ շտապեցնել գործադուլի ժամանակ վարձադրութեան հարցի օրինական լուծումը:

ՊԵՆԶԱ, 27 յունվարի: Ոստիկանապետ Ցանդուրօվին սպանողը տեղական գեղարուեստական դպրոցի սան Վիկտոր Վասիլևսկին է: Նա խոստովանվեց և բանտարկվեց:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի: Պաշտօնական: Գեներալ-ադյուտանտ Լինեվիչի հեռագիրը Խարբինից յունվարի 26-ին: Անդրբայկալեան վիճակի ժամանակաւոր գեներալ-նահանգապետ Պօլկօվնիկօվը հաղորդում է. 1) յունվարի 2-ի գիշերը, հինգերորդ արևելեան Սիբիրի հրաձիգ զօրաբանակի առաջին գումարտակները Չիտի ժամանելուց յետոյ, կալանաւորվեցին 3-րդ ռէզէրվնի երկաթուղային բատալիօնի 81 զինուորներ, որոնք յարել էին յեղափոխականներին. 2) յունվարի 21—23-ը քաղաքի բնակիչները և երկաթուղային ծառայողները, ենթարկվելով գեներ. Րէննենկամֆի հրամաններին յանձնել անհագին քանակութեամբ զանազան տեսակի հրացաններ, որոնց թիւը որոշել դժուարին էր: Յունվարի 23-ին զօրքը մանրամասն խուզարկութիւն կատարեց երկաթուղու արհեստանոցներում: Գտնված են բազմաթիւ հրացաններ և պաղ զէնքեր, մօտ 100 պուդ պիրօքսիլին, բազմաթիւ զանազան ձեի ռումբեր, ձեռքի դժոխային մեքենաներ: Գլխաւորապէս զէնքերը բերում էին կանայք, որովհետև տղամարդիկ-յեղափոխականները վախենում էին անձամբ զէնքը յանձնելու: Յեղափոխական պարագլուխներից կալանաւորված են 20 հոգի, բացի դրանից 150 խռովարարներ: Չիտում հրատարակվող թերթերը, որոնք ազգաբնակութեան դրդում էին ապստամբութեան և տպագրել էին խռովարար թռուցիկներ, փակված են: Տպարանները կնքված են, խմբագիր-հրատարակիչները կալանաւորված են: Չիտում պօստը և հեռագիրը կանոնաւոր բանում են: Կարգը և խաղաղութիւնը վերականգնված է առանց արիւնհեղութեան: Վլադիվօստօկից գեներալ Միլչենկօն հաղորդում է, որ բերդում բոլորովին խաղաղ է»:

ԹԻՖԼԻՍ, 27 յունվարի: Բագուի գեներալ-նահանգապետը հաղորդում է, որ վերջին օրերս քաղաքում, և նաւթային շրջաններում կատարելապէս խաղաղութիւն է տիրում: Զնչին բացառութեամբ աշխատանքները շարունակվում են ամեն տեղ:

ԽԱՐԿՕՎ, 27 յունվարի: Ագրարական շարժմանը վերջ տալու համար նահանգապետը օգնում է գիւղացիներին կալուածատէրերի հողերը գնելու: Վալկօվսկի գաւառի գիւղացիները նահանգապետի միջոցով գնում են 5751 դեսեատին հող:

28 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի: Պաշտօնական: Յունվարի 26-ին կոմս Վիտտէն հեռագրեց եւրօպական Ռուսաստանի բոլոր նահանգապետներին հետևեալը՝ «Խնդրում եմ ձեզանից կախված բոլոր միջոցները գործադրել, որքան կարելի է, շուտով կազմել և յայտարարել ընտրողական ցուցակները: Ցուցակների յայտարարութեան ժամանակի մասին ներքին գործերի մինիստրը ստանալով տեղեկութիւն՝ կը նշանակէ նահանգական ընտրողական ժողովներ հրաւիրելու ժամանակամիջոցը: Այդ նշանակված ժամանակից էլ կախված կը լինի որոշել ինչպէս համագումարների, նոյնպէս և համայնքների ընտրութիւնների ժամանակը»:

ՉԵԼԻԱԲԻՆՍԿ, 27 յունվարի: Սիբիրի երկաթուղու երթևեկութիւնը արդէն երկու շաբաթ է, որ կանոնաւորվել է, բայց և այնպէս դանդաղումներ են լինում զինուորական գնացքների պատճառով, այնպէս որ արևմուտքից եկողները ստիպված են լինում մի քանի օրով մնալ Չելիաբինսկի կայարանում: Սամարայի երկաթուղին իր վագոնները Սիբիրի գծին տալ չէ ուզում:

ԵԱՐՕՍԼԱՎԼ, 27 յունվարի: Դեմիդօվսկի լիցէյի խորհուրդը որոշեց միջնորդութիւն չը յարուցանել ներկայ ուսումնական տարի պարապմունքները վերսկսելու մասին, փոխադրական քննութիւններ չը կատարել բացի աւարտման:

ԲԷԼՕՍՏՕԿ, 27 յունվարի: Դուման որոշեց ներկայ ֆինանսական տագնապի պատճառով միջնորդել պետական հարկերը պակասեցնելու մասին, և քաղաք ներմուծվող ու արտահանվող ապրանքներից տուրք վերցնել:

ՎՕՐՕՆԵԺ, 27 յունվարի: Հոկտեմբերի 17-ի Միութեան անդամների բազմամարդ ժողովում անհագին ժամանակ և ուշադրութիւն նուիրեցին ագրարական հարցին, թէ ինչ միջոցով աւելի խելացի կը լինի գիւղացիներին օգնել: Խոշոր կալուածատէր Պրուտչենկօ ճառ խօսեց, որով խոստովանելով Միութեան մայրաքաղաքների կենտրոնական մասնաժողովների ամենագին նշանակութեան մասին, նա աւելի նպատակայարմար է համարում գաւառական բաժանմունքներին կազմակերպել առանձին միութիւններ կազմել և համերաշխութեամբ ու եռանդով աշխատել հայրենիքի բարօրութեան համար:

ՎԱՐՇԱՎԱ, 27 յունվարի: Գեներալ-նահանգապետը հետևեալ պարտադիր օրէնքն է հրատարակել. արտասահմանից գաղտնի զէնք և հրացանների պաշարներ ներմուծողները, բացի հրացանների պատժից, երեք ամսվայ բանտարկութեան և մինչև 3000 րուբլի տուգանքի են ենթարկվում:

ՏՕԿԻՕ, 27 յունվարի: Պարլամենտը 222 ձայների մեծամասնութեամբ 125-ի դէմ, համաձայնութիւն տուեց զինուորական տուրքերը պահպանելուն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի: Սենատը հաստատեց դատաստանական պալատի վճիռը «Пулеметъ» թերթի խմբագիր Շէբուեվի գործի մասին, որը դատապարտված էր մի տարի բանտարկութեան:

ՊԱՐԻԶ, 26 յունվարի: Սօցիալիստների հարցապնդումին՝ թէ կառավարութիւնը պատասխանատուութիւն յանձն է առնում արգեօք, լրագրական արշաւանքների համար Մարօկկօյի կօնֆերէնցիայի առիթով, մինիստր-նախագահ Րուվիէն պատասխանեց պատգամաւորների պալատում, որ նրան ստիպում են աւելորդ անգամ կրկնել, որ ֆրանսիական մամուլը վայելում է անսահման ազատութիւն և կառավարութեան ճնշմանը ենթակայ չէ: Դիմել արտաքին քաղաքականութեան հարցերի բացատրութեանը այժմ, Մարօկկօյի կօնֆերէնցիան շարունակվելու պատճառով, անտեղի է: Հարցապնդումը յետ է առնված և հարցը դրանով էլ վերջացաւ:

ԼՕՆԴՕՆ, 27 յունվարի: (Րէյտեր) «Դէյլի-Խրօնիկլ»-ին հաղորդում են Տանժէրից, որ տեղական զօրքը ներս մտան անգլիական միսսիայի շինութիւնը, զօրացան դրամներ և թանգագին իրեր: Հօնգկօնգից հաղորդում են «Ստանդարտին», որ Զանդպուլում յարձակում են գործել պրէսվիտերիանների միսսիայի վրա: Եկեղեցին, հիւանդանոցը և միսսիայի շինութիւնն այրված է, իսկ միսսիօնները փախչելով ազատվել են:

ԻՐԿՈՒՏՍԿ, 27 յունվարի: Անդրբայկալից վերադարձաւ գեներալ Մէլլեր-Զակօմէլսկին և այստեղով անցաւ:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Զ. Ի. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ե. ԳՈՒՐԴԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.:
Խ. Գ ԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԴԱԶԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօլօգիական հետազօտութիւններ:
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավէտինսկայա փողոց, 101, տէլէֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 1—2 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ. և ելեքտրո-բուժութիւն:
Գ. Ն. ԴԷՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱԻԵՏԻՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԷՅԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում միկրօսկօպիական, բակտէրիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից:
(չ.ու.կ.) 32—100

Այն հային, որին յունվարի 10-ին Թիֆլիսի կայարանում միամըտօրէն հաւատացի չէմօդանս և կորցրի, խնդրում եմ գոնէ այնքան ազնիւ լինի, որ միջի եղած թղթերս ու դօկումենտներս (շըռով կապած) ուղարկի ինձ այս հասցէով. Баку, Каспiйское Товарищество, Егiазарову.
2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, յունվարի 29-ին, Հայոց Դրամատիքական ընկերութեան դերասանների խումբը կը ներկայացնէ

I
ՄԿՆԻԿ
Վօդ. 1 գործողութեամբ, Վերյրի:

II
ԱՐՋ
Վօդ. 1 գործ. Չէխովի:

III
ԷՍ ԷԼ ՔԻ ՄՕՅԻՔԼՈՒԹԻՆ
Վօդ. 1 գործ. Գ. Տէր-Գրիգորեանի:

Մասնակցում են. տ. Մելիքեան, պ.պ. Պետրոսեան, Յարութիւնեան, Ավեան, Ադելխանեան, Ուշտունի:
Տեղերի գները. 1-ին կարգը 1 ր., 2-րդ կարգը՝ 75 կ., 3, 4, 5 կարգերը՝ 50 կ., 6—10 կարգերը՝ 40 կ., և 11—15 կարգերը՝ 30 կ.:
Հիւրերը, բացի դրամից, վճարում են մուտքի փող 1 րուբլի:
Սկիզբն է ճիշտ 7½ ժամին երեկոյեան, վերջը—10½ ժամին գիշերվայ:
(ու.շ.կ.) 3—3

Մի ուսուցիչ ցանկանում է սենեակ ունենալ մի ընտանիքում, որի փոխարէնը կը պարապի երեխաների հետ հայերէն, ֆրանսերէն և թուաբանութիւն:
Հասցէն՝ «Մշակի» խմբագրատուն:
3—5

Լոյս տեսաւ նոր գիրք
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի: Ջեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արկածեալների օգտին: Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկեվիչի փողոց, № 13: (հ.կ.ե.) 3—28

Մի տիկին 100 րուբլու կարիք է զգում իր ամուսնուն հիւանդութիւնից ազատելու համար, ապա թէ ոչ մահն անխուսափելի է: Բարերար տիկնանց և պարոնների ուշադրութիւնն է հրաւիրում մի կերպ օգնելու ինչ պայմանով էլ ուզում է լինի: Հասցէն՝ Гановская ул. № 17 բակում: Սաթենիկ Բաբուրեանցին: (ա.օ.) 2—3

Ջուրակահար (դիրիժոր) Պրագի երաժշտական ճեմարանը աւարտած՝ տալիս է դասեր ջութակի վրա, պատրաստում է նաև եկեղեցական երգեցիկ խումբ Եկմալեանի պատարագի արարողութեան եղանակով: Հասցէն՝ Թիֆլիս, Դաւթեան հրապարակ № 22 (Давидовская площадь № 22.) հարցնել Պետրոս Տէր-Աստուածատրեանին. (Петръ Ив. Теръ-Асатуровъ.
2—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Ղզլարի հայոց ծխական հոգաբարձութիւնը հրաւիրում է 1905/1906 ուսումնական տարվայ երկսեռ դպրոցների համար փորձված աւագ ուսուցիչ, որը ցանկալի է լինէր ճեմարանի լսարանները աւարտած: Նա ունենալու է շաբաթական 24 դաս—հայոց լեզուից, թուաբանութիւնից և, եթէ կարելի է, երգեցողութիւնից և ստանալու է 680 րուբլի ռոճիկ, բնակարան, վառելիք և լուսաւորութիւն: Ցանկացողները շտապեն դիմել. Кизляръ Терской области Армянскому Приходскому Попечительству. 2—3

Լոյս տեսաւ
Հ. Առաքելեանի
«ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ»
IX գիրքը, այն է
ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ
գրեց Հ. Առաքելեան
Բաղկացած երեք մասերից—I. Տասն օր Կ. Պօլսում: II. Տասն օր Պիրամիդների աշխարհում. III. Տասն օր Երուսաղէմում: Գինն է 40 կ. գումարով առնողներին 10% զեղչ: Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և իրան հեղինակին, Թիֆլիս, խմբագրութիւն «Մշակ» լրագրի: 3—5

Լոյս տեսաւ ՀԱՈՒՊՏՄԱՆԻ
«ՋՈՒԼՀԱԿՆԵՐ»-ի
հայերէն թարգմանութիւնը, 106 երես, գինը 40 կ.: Դիմել՝ Москва, контора Бр. Джамгаровыхъ, С. Артемьевой. 1—5

Կենտրոնական գրավաճառանոցում
Թիֆլիսում վաճառվում են հետևեալ գրքերը
Պարոնեան. Ծիծաղ. գ. 1 ր. 25 կ.: Արևելեան ատամնաբոյժ. գ. 50 կ.: Քաղաքավարութեան վնասներ. գ. 75 կ.:
Ս. Մ. Մատենադարան. Գիրք թղթոց. գ. 1 ր. 50 կ.:
Բարխուդարեան Մ. եպ. Արցախ. գ. 1 ր. 50 կ.:
Բ. Վարդ. Գ. Ծուղուրեան. Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ. ա. հատ. գ. 50 կ., բ. հատոր գ. 1 ր.:
Բժ. Ս. Շահնազարեան. Հայոց թեմական դպրոցների կանոնադրութեան նախագիծը. գ. 1 ր.:
Ա. քահ. Մարգարեան. Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքը. գ. 1 ր.:
Խօղէ-էյփգարա. Մարիանա. դրամա 3 գործ. թարգ. Ա. Կ. գ. 1 ր.:
Սենկևիչ Հ. Յա երթաս. թարգ. Ստ. Լիսիցեանի. գ. 1 ր. 50 կ.: 1—1

Մայրենի լեզու,
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ, 32-դ տիպ, գինն է 25 կ.
Ներկայ 32-րդ տպագրութեամբ այս փոքրիկ գրքոյկը բոլորում է իր գոյութեան երեսունհինգ տարին: Որպէս տօնական հրատարակութիւն՝ ներկայ տպագրութիւնը ենթարկվել է մանրամասն վերամշակման. բուն ընթերցարանը, որ բաղկացած է ԺԴ մանրաշրջանից, խմբագրվել է նորից: Այբբենական մասի բոլոր պատկերները, որոնք տալիս են բարոյախօսական զրոյցների և իրազննական դասերի նիւթը և որոնցից պէտք է վերցնել վերլուծանելի բառերը տառադիտութեան համար, փորագրված են Բեռլինում և Ժընեվում. ամեն մի տպագիր դասի համար դրված կան գրչագիր օրինակներ: Գրքի սկզբում, բացի ընդարձակ յառաջաբանից, դրված է մի օրինակելի դաս ուսուցիչների համար: Այբբենական մասի վերջում, ուսուցանողների դիւրութեան համար, դրված են դժուար բառերի բացատրութիւնները: Ընթերցարանական մասի մէջ ևս, ամեն մի մանրաշրջանից յետոյ, ուսուցանողները կը գտնեն համառօտ բառարան դժուար բառերի, որոնց պիտի լրացնեն իրանք ուսուցիչները ամեն մի յօդուածի համար, եթէ կարևորութիւն զգան:
Հայոց լեզուի բոլոր ուսուցիչներին, որոնք կը հաղորդեն ինձ իրանց հասցէները, հաճութեամբ կուղարկեմ մի մի օրինակ ներկայ տպագրութիւնից որպէս նմուշ, իսկ այն ուսուցիչները, որոնք Թիֆլիսումն են, կարող են անձամբ վերցնել իրանց օրինակը Կենտրոնական Գրավաճառանոցից, ուր գտնվում է իմ գրքերիս պահեստը:
Վաճառման պայմաններն են՝ հարիւրով գնողներին 20% զեղչ, հինգհարիւր և աւելի օրինակ գնողներին 25% զեղչ:
3—3 Նիկողայոս Տէր-Ղևոնդեանց

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.